

25-26(600-601)

18.12.2020

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարկ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

**ԱՅՈՒՆ, ՄԵՉ ՀԱՍԱԾ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐ ԵՂԱՎ ՄԵՐ ՈՒԺԻՅ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ: ՍԱԿԱՅՆ ԷՍ ԷԼ ԿԱՆՅՆԻ: ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄԸ ՉԻ, ՈՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ԷՍ ՏԵՍԱԿ ԱՂԵՏ Է ՏԵՄՆՈՒՄ: ԷԼ Է ՏԵՍԵԼ ԵՎ ՆՈՐԻՑ ՈՏԻ ԿԱՆԳՆԵԼ ՆՈՐԻՑ ՎԵՐԱՇԻՆԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ:**

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՈՒՂԵՐՁԻ ՓՈԽԱՐԵՆ

Սիրելի՛ Ուսուցիչ,  
Այսօր Դու կրիկին դատապարտված ես հաղթահարելու այն դժգոհումն ու մահաբեր փորձությունները, որ ապրում ես ընդհանուր առմամբ, ժամ առ ժամ:  
Դու երրորդ անգամ ես ապրում քո կրթած ու դաստիարակած աշակերտներին կորցնելու անդառնալի կորուստը, երրորդ անգամ իմաստավորում նրանց նահատակման խորհուրդը, և սա սարսափելի է: Ինչպես նրանք են հարատևում քո մտքերի ու հիշողության խորքերում, այնպես էլ Դու ես մինչև վերջ դառնում նրանց գաղափարների ու համոզմունքների ուղեկիցը:  
Դու իշխանավոր ես և ոչ վարժապետ, Դու այսօր շարունակում ես հաղթել, որովհետև Քո աշակերտները արյան գնով գրում են մեր ռազմարվեստի պատմության փայլուն էջերը:  
Դու արժանապատիվ ես ու հաղթանակած, որովհետև այդ նույն ոգով են համակված սահմանը պահող և թշնամու ողնաշարը ջարդող Քո սաները:  
Գիտեմ, որ Քեզ համար դժվար է, բայց համոզված եմ, որ հոգեպես չես ընկրկի, չես նահանջի և ոգեղեն էությանը ու բարձր կազմակերպվածությանը կպահես Հայրենիքի հոգևոր, մտավոր կյանքի և մեր ազնվականության ամբողջականությունը:  
Շուտով նորից դասարան կմտնես և, կոկորդիդ հեղձուկը սեղմելով, նոր սկիզբ կդնես և դասդ կսկսես ողջերին ու ընկածներին փառք տալով: Անտրոհելի է Քո կոչումը, Անսքող՝ Քո վեհությունը, ես հավատում եմ Քեզ ու Քո երդման գրին: Ավանտանքով ու խոնարհումով առ Քո անուն՝

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ  
ԱՅ ԿԳՄ Մախարար  
5 հոկտեմբերի, 2020թ.

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԱՆԳԸ՝ ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ ԿՈՉՆԱԿ



Մեզ պարտադրված դաժան պատերազմից հետո Արցախում կրկին հնչում է դպրոցական զանգը: Անչափ ակնահաճո, հոգեպարար տեսարան. հայրենիքի փողոցներով քայլում են դպրոց շտապող կամ դպրոցից տուն դարձող երեխաներ, ծնողների ձեռքից բռնած մանուկներ՝ մանկապարտեզի ճանապարհին, երիտասարդներ՝ բուհեր կամ այլ ուսումնական հաստատություններ գնալիս: Դպրոցական զանգը տուն է կանչում հեռվում գտնվողին, հույս ներշնչում տնանկին, ապրելու իմաստ տալիս բոլորին:  
Դպրոցական զանգը սփռում է խաղաղության ելևէջներ: Ուրեմն, թող միշտ հնչի զանգը, և թող հարատև լինի խաղաղությունը մեր բազմաշարքար հողում: Աճենք, բազմանանք, մեր վիրավոր երկիրը շենացնենք, ապագայի հանդեպ մեր վառ հույսերը ծարձակվեն... «Կարծես թե դարձել եմ ես տուն, Ամեն ինչ առաջվանն է կրկին...»՝ տերյանական տեսիլքը մեզ համար պատկերվի՝ որպես վառ իրականություն...  
Լուսանկարում՝ Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի վերաբացման՝ զանգը հնչում է իբրև խաղաղության կոչնակ:

Տես նաև՝ էջ 2:

## ԱՆ ՆԱԽԱԳԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ



Հարգելի՛ հայրենակիցներ  
Ադրբեջանա-թուրքական դաշինքի կողմից պարտադրված ծանրագույն պատերազմի հետևանքով կորցնելով մեր սուրբ հայրենիքի զգալի մասը և

հազարավոր պայծառ կյանքեր՝ այնուամենայնիվ, մեր ժողովրդի հավաքական ուժի և կամքի շնորհիվ, մեր նվիրյալ զավակների արյան գնով մեզ հաջողվել է պահպանել Արցախ աշխարհի՝ Մեծ Հայքի պատմական 10-րդ նահանգի մի մասը, որտեղ շարունակելու է ապրել, արարել ու պայքարել արցախահայությունը՝ համուն իր իրավունքների ու ազատությունների, համուն ազգային արժանապատվության ու հարատևման:  
Նախ և առաջ, կուզեի իմ խորին ցավակցությունները հայտնել բոլոր գոհվածների հարազատներին և ողջ հայ ժողովրդին

անդառնալի ու ծանր կորուստների համար: Մենք ցմահ երախտապարտ ու պարտական ենք Հայրենիքի համար ընկած յուրաքանչյուր հերոսի և նրանց հարազատներին, մենք երախտապարտ ենք նաև Հայրենիքի պաշտպանության գործին այս կամ այն ձևով սրտանց մասնակցած յուրաքանչյուր անձի՝ զինվորից մինչև սփյուռքահայ մանուկ, առաջնագծից մինչև խորք թիկունք: Ինչպես արդեն հայտարարվել է, Արցախի և Հայաստանի Հանրապետություններում դեկտեմբերի 19-ից հայտարարվելու է եռօրյա սուգ՝ ոգեկոչելու համար պատերազմի ընթացքում

գոհված մեր հայրենակիցների հիշատակը:  
Պետք է արձանագրել, որ չնայած առկա ծանր մարտահրավերներին, Արցախի Հանրապետության անկախությունն ու Սահմանադրությունը գործում են նույնությամբ, դեռ ավելին՝ մեզ պարտավորեցնում են առավել վճռակամորեն շարունակել իրենց պատմական, արժեքային ու իրավաբաղադրական հիմքի՝ Արցախյան շարժման պայքարն ու ոգին: Հարկ է արձանագրել նաև, որ միջազգային հարաբերություններում մարդու իրավունքների պաշտպանությունը մնում է զուտ հռչակագրային ցանկություն, որի ապահովման

ուղղությամբ միջազգային հանրությունը հիմնականում չի կատարել իր ստանձնած պարտավորությունները՝ աչք փակելով հայության հանդեպ կատարված մարդկության դեմ հանցագործության աղաղակող փաստերի առջև:  
Այս դժվարագույն իրավիճակում մենք պարտավոր ենք ուղիղ նայել իրականության աչքերին, արձանագրել առկա խնդիրները, դնել հստակ նպատակներ և քրտնաջան, հետևողական, խելացի ու համատեղ աշխատանքով հասնել այդ նպատակներին: Թե ինչ ունենք և ինչ պետք է անենք, հակիրճ կենդանացնենք մեր ըստ ուղրտների: 4

## ԱՄԵՆ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ, ՈՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ ԱՊԱԳԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԸ

Հարցազրույց ԱՅ կրթության, գիտության եւ մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանի հետ



- Տիկին Ղարախանյան, անմախաղեպ դաժան պատերազմը մեծ վնասներ է հասցրել Արցախին, մասնավորապես նաև կրթական ոլորտին: Ի՞նչ առաջնահերթ խնդիրներ են կանգնած նախարարու-

նքը: Մինչև պատերազմը մեր հանրապետությունում գործում էր 220 դպրոց, այսօր մնացել է 102-ը: Մեծ վնասներ են կրել ԱՅ վերահսկողության տակ մնացած համայնքների մի շարք դպրոցներ: Ամենից շատ տուժել է Ստեփանակերտի Ավետիք Իսահակյանի անվան հ. 10 դպրոցը: Տուժել են Մարտունի քաղաքում գործող 2 դպրոցները, Ասկերանի շրջանի Այգեստան, Շոշ, Մարտունու շրջանի Կաղարծի, Քերթ, Սոս և Մարտակերտ քաղաքի դպրոցները:  
Հրետակոծության արդյունքում տուժել են նաև շրջաններում գործող մանկապարտեզներ, այդ թվում՝ Ասկերանի շրջանի Շոշ, Մարտունու շրջանի ճարտար, Կարմիր շուկա համայնքների և Մարտունի քաղաքում գործող 2 մանկապարտեզները:  
Այս պահին նախարարության կողմից աշխատանքներ են տարվում վնասված

գույքի և տեխնիկայի հաշվառման ուղղությամբ: Օբյեկտիվ պատճառներով դեռևս չեն գործում Մարտունու շրջանի Գիշի, Հերիեր, Մաճկալաշեն, Մուշկապատ, Եմիշճան, Ծովատեղ, Մյուրիշեն, ճարտարի հ. 3, Մարտունիում գործող հ. 1 և հ. 2, Ասկերանի շրջանի Այգեստան, Ազնեք, Սառնաղբյուր, Փառուխ, ինչպես նաև Մարտակերտի շրջանի Տոնաշեն համայնքների դպրոցները:  
Հիմնական պատճառները կապված են հրետակոծության արդյունքում կրած վնասների և ջեռուցման համակարգում եղած վթարների հետ: Բոլոր դպրոցներում առկա խնդիրները մինչև տարվելը կկարգավորվեն, և դրանք կգործեն:  
Առայժմ ժամանակավորապես չի գործելու Ստեփանակերտի հ. 5 դպրոցը, որտեղ տեղակայված են ռուս խաղաղապահները:

Այդ դպրոցի աշակերտներին առաջարկվել է ժամանակավորապես տեղափոխվել Ստեփանակերտի հ. 4 և հ. 8 դպրոցները:  
Մինչև պատերազմը արցախցի դպրոցականների թիվը կազմում էր 23 հազար 397, ներկայումս դպրոց է հաճախում 11 հազար 580-ը, սակայն ամենօրյա դիմամիկան ցույց է տալիս, որ կան աճի տեմպեր:  
Հայրենազուրկ է դարձել շուրջ 40 հազար մարդ: Հիմա ճշտում ենք, թե քանի դպրոցական կա նրանց մեջ, ուսուցիչների և աշակերտների տվյալները, որպեսզի հետազայում հաշվի առնենք ոչ միայն ուսուցիչներին աշխատանքով ապահովելու, այլև կրթական տարաբնույթ ծրագրեր նախաձեռնելու համար:  
ՀՀ ԿԳՄ նախարարության ղեկավարությանը դիմել ենք Երևանում և մարզերում գտնվող մեր հայրենազուրկ 2

թյան առաջ:  
- Արցախի կրթական համակարգը կրել է թուրք-արդրբեջանական և միջազգային ահաբեկչության դաշինքով սանձազերծված պատերազմի աննաժամանակ հետևանք-

ԸՆԹԱՅ

**Չարմանայի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անասան հավաքով: Կենսունակություն էլ որ ասում եմ, ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, եւ ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հասկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող է կրկնել Վարդանանց խոսքը, թե՛ դու կարող ես հայի մարմինը փանջել, բայց նրա ոգու հեղ ի՞նչ ես անելու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարերից էլ կարող է Աբրահամու զավակներ հարուցանել եւ դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ:**

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑԻ ԶԱՆԳԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՉՆԱԿ



Կարող ենք դարձնել հնարավոր:

Ներկայումս մեկ ռոպե լուծված է հարգեցին պատերազմում հերոսաբար ընկածների հիշատակը:

Ելույթ ունենալով Արցախում ՌԴ խաղաղապահ ուժերի գործունեության կառավարման կենտրոնի պետ, զեներալ-մայոր Սերգեյ Ժնուրին ասաց. «Չուզումս եմ պահել իմ զինվորները հետո անդիսավոր բացվում է առաջին դպրոցը: Այդ կապակցությամբ շնորհավորում եմ քաղաքի վարչակազմին, նախարարության ղեկավարությանը, ուսուցիչներին, ծնողներին և իհարկե՝ աշակերտներին: Մեր՝ խաղաղապահների, նպատակն է կարճ ժամկետում բացել բոլոր դպրոցները: Չգտնեմ եմ, որ այս բազմաշաբաթյա հողում այլևս պատերազմ չլինի: Գաղտնիություն եմ մտածում ձեզ ուսման մեջ: Ինչքան խաղաղապահները ձեր կողքին լինեն, դուք միշտ՝ Ռուսաստանի հետ, հաջողություններ կունենաք»: Նա դպրոցին հանձնեց արժեքավոր նվեր:

«Վերջապես դաժան պատերազմից հետո բացեցինք մեր դպրոցի դռները: Փառք ու պատիվ մեր բանակին, մեր ընկած տղաներին», - ասաց դպրոցի տնօրեն Լուսինա Մարտիրոսյանը: Նա ընդգծեց, որ Արցախի ժողովուրդը երբեք ռազմատենչ չի եղել, այլ միշտ պաշտպանում է իր հողը և արեւելու, իր ինքնությունը պահպանելու իրավունքը: Նա երախտագիտություն հայտնեց խաղաղապահ ուժերին, որ խաղաղություն հաստատեցին մեր հողում՝ մարշալներ Գրիգորյանի, Բաղդասարյանի, Գամազասյա Բաբաջանյանի, քրիստոնեական արժեքներ և քաղաքակրթություն կրող հինավուրց հայկական արցախյան հողում:

ԱՅ ԿԳՄՆ ներկայացուցիչ Ռուբեն Օսիպովը, շնորհավորելով բոլորին դպրոցի վերաբացման առթիվ, երեխաներին կոչ արեց լավ սովորել, պահպանել մեր պատմությունը, ավանդույթները, մեր մայրենին, լինել Արցախի վաղվա արժանավոր քաղաքացիներ: Որպես նախարարության ռուսաց լեզվի գլխավոր մասնագետ՝ նա խաղաղապահներին տեղեկացրեց, որ Արցախն այն երկրներից է, որն առանձնահատուկ վերաբերմունք ունի ռուսական մշակույթի, լեզվի հանդեպ: Գայ ժողովուրդը մեկ անգամ չէ, որ հայտնվել է ծանր կացության մեջ, բայց միշտ արժանապատվորեն հաղթահարել է բոլոր դժվարությունները և բուժել վերքերը: «Այսօր ձեր ներկայությունն այստեղ հավաստում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը», - ասաց նա՝ դիմելով խաղաղապահներին:

Մյուս ելույթ ունեցողներն էլ՝ դպրոցի ծնողական կոմիտեի նախագահ Գայանե Լալաբեկյանը, զինղեկ Արմեն Սողոմոնյանը ներկայացրին Արցախի ժողովրդի խաղաղասեր, պատվախնդիր լինելը, իրենց արժանապատվությունն ու մարդկային իրավունքները պաշտպանելու կամքի ուժը: Գայանե Լալաբեկյանը քանակազմից շնորհակալություն արտասանեց դպրոցի սան Էմմի Տեր-Թարխանյանը: Դպրոցի վերաբացման գանգը հնչեցնելու պատիվը տրվեց Շուշի քաղաքից առաջին դասարանցի Նանե Սարգսյանյանին, հ. 2 և հ. 10 դպրոցների աշակերտներ Արմեն Դազարյանին և Ռոբերտ Գանիբեկյանին: Դպրոցի գանգը հնչեց իբրև խաղաղության կոչնակ:

Արցախի մայրաքաղաքն աստիճանաբար մտնում է բնականոն հունի մեջ: Անչափ ուրախալի է հանդիպել տուն վերադարձող արցախցիներին: Առավել ևս ուրախալի է տեսնել դպրոցի ճանապարհին դադարեցրած պաշտպաններն ուսած երեխաների:

Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցը պատերազմից հետո առաջինն է բացել իր դռները ուսուցիչների և սաների առաջ: Կրթօջախի տնօրեն Լուսինա Մարտիրոսյանն անաբող ուրախություն է պարունակում, թեպետ դեռ չի անցել սեպտեմբերի 27-ի առավոտյան մղձավանջը, երբ մայրաքաղաքի մերձակայքում պայթեց թշնամու առաջին հրթիռը, հետո երկրորդը, երրորդը... Անմիջապես հասկացավ, որ դա նոր, անողորմ պատերազմ է, և առաջինը զանգեց դպրոցի զինղեկին՝ քաղաքապետություն կազմակերպելու նպատակով: Վերջինս, սակայն, ասաց, որ ինքն արդեն զինկոմիսարիատում է: «Ժամանակ չկար երկար մտածելու, կիսահագնված ինձ զգեցի դպրոց: Լավ է, պահակը, տնտեսվարը տեղում էին, բացեցինք ապաստարանը, ու քիչ հետո ժողովուրդը հավաքվեց»:

Պատերազմի ոչ մի օր Ստեփանակերտը չլքած տնօրենը նյութերի 17-ից հոգատար թխականի պես իր գլխավորած կրթօջախի թերի տակ է առնում ոչ միայն իր կրթօջախի սաներին: ԱՅ կրթության, գիտության և մշակույթի նախարարը օրեր առաջ հայտարարել էր, որ հ. 2 դպրոցը հավաքագրում է աշակերտներին, որտեղ կարող են հաճախել տարբեր դպրոցների երեխաներ:

Այստեղ հաճախում են ինչպես մայրաքաղաքի մյուս դպրոցներից, այնպես էլ Մարտունիի, Շուշիի, Գաղաթի, Ասկերանի շրջաններից տեղահանված երեխաներ:

«Պատերազմից հետո դպրոց մտնելով՝ առաջին գործս էր նախատեսված տղաների նկարների առաջ խոնարհվել և ներողություն խնդրել, որ չկարողացանք նրանց ազատագրածը պահել, բայց եղածը եղել է, պիտի շարունակենք ապրել, գոյատևել: Իրավունք չունենք ընկրկել...», - տխրությամբ ասում է իր ամբողջ գործունեության ընթացքում մատաղ սերնդի մեջ հայրենասիրություն սերմանած պատմության ուսուցչուհի-տնօրենը:

Նյութերի 27-ին հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ դպրոցի վերաբացումը: Ներկա էին ԱՅ կրթության, գիտության և մշակույթի նախարարության, ՌԴ խաղաղապահ ուժերի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ: Միջոցառումը վարեց դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Մարիաննա Բաղդասարյանը, որը, ողջունելով ուսուցիչներին և աշակերտներին վերադարձը հարազատ դպրոց, ասաց. «Այսօր դպրոցը պատրաստ է իր գիրկն ընդունել ոչ միայն իր, այլև Արցախի գյուղերից և քաղաքներից տեղահանված երեխաներին. չէ՛ որ միայն միասին անհնարը

ԱՄԵՆ ԻՆՉ ՊԵՏԷ Է ԱՆԵՆՔ, ՈՐ ՎԵՐԱԿԱՆՔԵՎԻ ԱՊԱԳԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԱՏԵ

1 թ ուսուցիչներին հնարավորության սահմաններում աշխատանքով ապահովելու հարցով: Այս տվյալները նախարարությունը առաջիկայում կփոխանցի նաև միջազգային կազմակերպություններին, որոնք ուսուցիչներին աշխատանքով ապահովելու առաջարկ են ներկայացրել: Այս պահին Երևանի էլցանցերի նոր գործարկվող գործարանը պահանջել է մեզանից 40 տղամարդ ուսուցիչ տվյալներ: Ես նախընտրել եմ սկսել Գաղաթի շրջանից, քանի որ նրա բնակիչները հայրենագուրկ լինելուց բացի նաև ունենալով են: Որպեսզի Երևանում գտնվող տղամարդիկ, որոնք ֆիզիկայի, մաթեմատիկայի մասնագետներ են, կարողանան աշխատանք ունենալ գործարանում: Իհարկե, նախընտրելի է, որ մեր ուսուցիչները մասնագիտական աշխատանքով ապահովվեն, բայց այս պահին անում ենք այն, ինչ հնարավոր է:

**- Իսկ Արցախում մանկավարժներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում:**

- Նախարարությունում ստեղծվել է տվյալների բազա, որտեղ հաշվառվում են հայրենագուրկ դարձած ուսուցիչները, դպրոցներին սպասարկող ուսումնառածանակ և տեխնիկական կազմի աշխատակիցները: Ներկայումս հաշվառված է 189 ուսուցիչ, նրանց մի մասը գտնվում է ԳՅ մարզերում և Երևան քաղաքում, ուստի զուգահեռ աշխատանքներ են տարվում ոչ միայն Արցախում, այլև ԳՅ-ում գործող Արցախի կառավարության օպերատիվ շտաբում: Առավելագույն ջանքեր են գործադրելու նրանց աշխատանքի տեղավորելու համար: Նախարարությունում հրավիրած խորհրդակցությանը մեր աշխատակիցներին, որոնք համատեղությամբ նաև դասավանդում են, հորդորեցի այդ ժամերը թողնել հայրենագուրկ ուսուցիչներին: Բացի դրանից, դիմելու ենք քաղաքապետարանի կրթության բաժնին, որ կրթական այն հաստատություններում, որտեղ մանկավարժները մեկ դրույքից ավելի ծանրաբեռնվածություն ունեն, հորդորեն, որ ավել ժամաքանակը թողնեն: Դրանով մենք բարոյապես և նյութապես օգնած կլինենք հայրենագուրկներին: Պետք է հոգատարությամբ և ջերմությամբ լցվենք նրանց հանդեպ:

**- Անդրադառնա՞նք մշակութային ժառանգությանը: Ինչքա՞ն ենք կորցրել, ինչքա՞ն՝ փրկել:**

- Մշակութային ժառանգությունը մույնպես ծանր հարվածներ է կրել: Զգալի թվով հուշարձաններ մնացին թշնամու վերահսկողության տակ. 319-ը՝ Քարվաճառի շրջանում, 315-ը՝ Քաջաթաղի, 100-ից ավելին՝ Ասկերանի, Գաղաթի շրջաններում: Կան բաներ, որ բառի ուղղակի իմաստով անընկալելի են: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի է համատեղել աղբեղանցի և Ազոխի քարանձավ երևույթները, Տողի մեղիքական ապարանքում աղբեղանցու բնակվելը: Ես դա համարում եմ չար դիպված և ժամանակավոր իրողություն: Գաղաթում են մնացել Արթուր Մկրտչյանի անվան, Խանիբեյրյանի անվան թանգարանները: Մեզ հաջողվել է

տարիանել Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանի լավագույն մուշկները, Տիգրանակերտի թանգարանը, Շուշիի գորգերի թանգարանից ամենաթանկարժեք ցուցանմուշկները: Ցավոք, մնացել են գորգերի պահոցը, քարերի, պատմության թանգարանները, պատկերասրահը: Ես դիմել եմ ՄԱԿ-ի գրասենյակին, ՅՈՒՆԵՍԿՕ-ին և Գայաստանում Ռուսաստանի դեսպանատանը: Բայց՝ ծայր բարբառո հանապատի: Մեր հույսը դարձյալ ռուս խաղաղապահների վրա է. տեսնենք կարողանա՞նք նրանց օգնությամբ փրկել մեր մշակութային ժառանգությունը գրավյալ տարածքներում: Տարիանել ենք հուշարձանների ամբողջ անձնագրային ֆոնդը, որը կհանձնենք մշակութային ժառանգության պահպանման հարցերով զբաղվող միջազգային հեղինակավոր կառույցներին, որպեսզի հետագայում ապացույցներ ունենանք, թե ինչ վիճակում են դրանք թողնվել գրավյալ տարածքներում: Խոսքը ոչ թե հայկական պատմական, այլ համաշխարհային քաղաքակրթական ժառանգության մասին է, որին պետք է լրջորեն վերաբերվի միջազգային համրությունը:

**- Թերևս նոր հայեցակարգ մշակելու կամ եղածը վերախմբագրելու անհրաժեշտություն կա...**

- Մեր հոգևոր հարստությունն անսպառ է, կրթվելու ծարավը՝ անհագուրդ: Ցայսօր մեր կրթական համակարգն ունեցել է քաղաքակրթական նշանակություն, բայց հիմա այն կարծիքին եմ, որ այն պետք է մոդելավորենք նոր մարտահրավերներին դիմակայելու մոդելով: Այն պետք է համահունչ լինի աշխարհում գործող ուժային հայեցակարգին, այսինքն՝ մեր կրթական համակարգը որդեգրելու է այն քաղաքակրթությունը, որը համահունչ է լինելու ներկայումս աշխարհում գործող ուժային կոնցեպտի սկզբունքներին: Ես այժմ ցատունով լցված նախարար եմ: Իրավունք չունենք մեր նախադասների արյունը պղծելու, պետք է վերին աստիճանի անթերի վերաբերմունք ու մոտեցում ունենանք: Կրթությունը պետք է զարգացնենք ռազմարդյունաբերության ուղղությամբ: Ես անհատապես աշխատելու եմ 10-12-րդ դասարանների երեխաների հետ, գտնելու եմ հետաքրքրություններ ունեցող բոլոր աշակերտներին և նրանց ուսումը կազմակերպելու աշխարհի վարկանիշային բուհերում:

**- Այս ծանր օրերին ի՞նչ կմաղթեիք ուսուցիչներին և առհասարակ մեր ժողովրդին:**

- Մենք այն ազգերից ենք, եթե ոչ միակը, որն իր նախահայրենիքից չի գաղթել: Գործողում են մեր ուսուցչությանը կրթական գործունեությունը նոր պայմաններում սկսել և շարունակել պատվախնդիր ծնով, ինչպես պատգամել են մեր ընկած տղաները: Շատ մեծ հարված է հասցվել մեր հոգեկերտվածքային առանձնահատկություններին, մեր հպարտությանը: Շատ խոցելի ենք դարձել, բայց ամեն ինչ պետք է անենք, որ վերականգնվի ապագայի նկատմամբ մեր հավատը:

ԲՈՒՄԱՆ ԿՅԱՆՔ

Մենք մի փոքրիկ ժողովուրդ ենք: Բայց էդպես չի ասում էն ժողովուրդը, որ մեծ չգտնում ունի դեպի լույսն ու քաղաքականությունը... Պատմությունից լավ գիտենք, որ հին բարձր կուլտուրական ազգերից շատերն էլ թվով շատ փոքր են եղել:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՊՇ-Ն ԱՆՑԵԼ Է ԲՆԱԿԱՆՈՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐԻ



Արցախի պետական համալսարանը դեկտեմբերի 1-ից վերսկսեց պարապմունքները: Այդ կապակցությամբ լրագրողների հետ ունեցած հանդիպմանը ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրեց իրավիճակը բուհում: Ըստ նրա տվյալների՝ ԱրՊՇ-ն ունի շուրջ 2500 ուսանող, 500 աշխատակից (որից 105-ը՝ ժամավարային հիմունքով աշխատող), 16 բաժին, 16 ամբիոն, 5 ֆակուլտետ, 4 պրոռեկտոր: Հայտնի պատճառով սեպտեմբերի 27-ից հետո խաթարվել են պարապմունքները, բուհն ունի անդառնալի կորուստներ պրոֆեսորադասախոսական անձնակազմից և ուսանողական կազմից: Դեռևս ճշտված չէ գոհված ուսանողների թիվը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ առաջին կուրսի տղաների շուրջ 80 տոկոսը գորակազմել է բանակ: Հատկապես դժվարություններ կան հեռակա ուսուցման համակարգի գոհված ուսանողների թիվը ճշտելու հարցում: Ռեկտորի հրամանով ստեղծվել է հանձնաժողով ուսանողների հետ տարվող պրոռեկտորի գլխավորությամբ, և առաջիկայում այդ թվերը կճշտվեն: Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ նոյեմբերի 6-ին ռեկտորատի նիստ է հրավիրվել հեռավար եղանակով, և կայացվել է ռազմական դրությունից բխող որոշում, այն է՝ չեղարկել ընթացիկ բոլոր ստուգումները և փորձուսուցումները և նոյեմբերի 10-ից անցնել հեռավար ուսուցման: Այն իրականացվել է ՀՀ-ից, քանի որ դասախոսների և ուսանողների մեծ մասը գտնվում էր այնտեղ: Ռեկտորի գնահատմամբ՝ ճիշտ չէր լինի այդ ուսուցումը համարել լիարժեք, քանի որ բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ չեն մասնակցել: Նոյեմբերի 15-ից հետո նրանք սկսել են վերադառնալ Արցախ: Ամեն օր հրավիրվել է խորհրդակցություն, և որոշում կայացվել է դեկտեմբերի 1-ից պարապմունքները սկսել ավանդական եղանակով: Շուրջ 300 դասախոսից ներկայացել է 248-ը: Ռեկտորն ուսանողների ներկայությունը բավարար համարեց, բայց ոչ լիարժեք: Առաջին օրը ներկայացել էր նրանց 36 տոկոսը, բայց նա համոզված է, որ այդ թիվն օրեցօր կաճի՝ հաջորդ շաբաթ հասնելով ամբողջ 60 տոկոսի: Ռեկտորատը որոշում է ընդունել, որ որևէ ուսանող հարգելի բացակայությունների համար չպետք է տուժի, քանի որ համալսարանն ունի հարյուրավոր ուսանողներ Չադրուքի և մյուս գրավյալ շրջաններից: Ա. Սարգսյանն ասաց, որ առաջիկայում կայանալիք ռեկտորատի նիստում ինքն առաջարկելու է ուստարվա բոլոր ստուգումներն անցկացնել ավանդական եղանակով, առանց գնահատման՝ ստուգված և չստուգված ձևով: Դա ընդունված տարբերակ է աշխարհում. առաջնակարգ մի շարք բուհեր այդ եղանակով են ստուգումներ անցկացնում՝ կապված համավարակի տարածման հետ:

ներն ընթանում են բոլոր ֆակուլտետներում՝ շենքային պայմաններով թելադրված՝ երկու հերթով, ինչպես նախկինում էր: Ռեկտորը մեծ դժվարություններ է կանխատեսում՝ հանրապետության տարածքային կարգավիճակի հետ կապված: Նպատակ ունեն առաջիկա գիտությունների նիստում վերանայել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համարակարգերի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը. ամենայն հավանականությամբ որոշ կրթական ծրագրեր կկրճատվեն կամ փոփոխության կենթարկվեն: «Մենք պետք է տուրք տանք տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ մասնագիտություններին ու կրթական ծրագրերի ներմուծմանը», - ասաց նա:

Ա. Սարգսյանը պատասխանեց նաև լրագրողների հարցերին: Ուսանողների վարձավարների վերաբերյալ ասաց, որ ըստ հանրապետության նախագահի խոստման՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսանողները սովորելու են անվճար հիմունքով: Տեղեկացրեց, որ ուսանողական հանրակացարանը կհատկացվի Հադրուքի շրջանից և թշնամուն հանձնված մյուս բնակավայրերից տեղահանված շուրջ 100 բնակիչ:

Շուրջի տեխնոլոգիական համալսարանի հետագա ճակատագրի վերաբերյալ հարցին Ա. Սարգսյանը պատասխանեց, որ հարցը, բնականաբար, պետք է լուծվի հիմնադիրի՝ կառավարության որոշմամբ: ԱրՊՇ տեղափոխվելու դեպքում կլինեն որոշակի դժվարություններ, քանի որ ԱրՊՇ-ն պետական ոչ առևտրային կազմակերպություն է, Շուրջի տեխնոլոգիականը՝ հիմնադրամ: ԱրՊՇ-ի ընդամենը եզակի մասնագիտություններ են հանրակազմում տեխնոլոգիականի մասնագիտությունների հետ. «Իմ կարծիքով, եթե խոսք լինի տեղափոխելու մասին, պետք է լինի ոչ թե միացում, այլ՝ լուծարում, և նախարարությունը միջոցներ ձեռնարկի ուսանողներին, ինչպես նաև աշխատողներին տեղավորելու ուղղությամբ: Տեխնոլոգիականը և նրա նախորդը հանդիսացող ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը ստեղծվել են 2007թ. ԱրՊՇ ագրարային ֆակուլտետի հիմքի վրա: Տեխնոլոգիականը 2015թ. ստեղծվել է այդ մասնաճյուղի և ԱրՊՇ քաղաքաշինության ֆակուլտետի հիմքի վրա: Այդ առումով մեծ դժվարություններ չեն լինի, քանի որ այնտեղ են տեղափոխվել նաև մեր համապատասխան դասախոսները: Դժվարությունների գծով, որոնց մասնագետները չկան կամ գրեթե չկան. տեխնոլոգիականը մասնագետների մի մասին հրավիրում էր ՀՀ-ից: Համապատասխան որոշման դեպքում մեն կլուծենք այդ հարցերը, մասնավորապես որ 2015թ. Շուրջի տեխնոլոգիականը բացելու և նրա գործունեությունը սկսելու հետ կապված բոլոր փաստաթղթերը կազմել էի ես՝ որպես այն ժամանակ ԿԳ փոխնախարար»:

Շուրջում նաև «Գյուլոջյան» կիրառական արվեստի ինստիտուտն էր, որը մագիստրատուրա չունի, ունի արվեստի հետ կապված երկու մասնագիտություն, մի քանի տասնյակ ուսանողներ:

Ա. Սարգսյանի կարծիքով՝ մեծ դժվարությունն այստեղ նաև այն կլինի, որ ԱՀ կառավարության որոշմամբ մինչև 2019 թվականը հանրապետության բոլոր բուհերը պարտավոր էին դիմել հավատարմագրման: ԱրՊՇ-ն հոկտեմբերին դիմել էր, հավատարմագրման գործընթացը պետք է տեղի ունենար մեկ տարի: ԱրՊՇ-ն նախնական հավատարմագրման

բոլոր փուլերը՝ ինքնավերլուծություն, որակի ապահովման ձեռնարկ, ռազմավարական ծրագիր, դրանից բխող ժամանակացույց, վերջին 5 տարվա ցուցանիշներ, անցել է, այդ բոլոր ժողովածուները հրատարակել, և պայմանավորվածություն կար, որ 2020թ. դեկտեմբերին ՀՀ ՈԱԿ-ի հետ՝ վերջնական հավատարմագրման համար: Բնականաբար, դա տեղի չունեցավ, բայց երկի 2-րդ կիսամյակում ԱրՊՇ-ն դրան և անդրադառնալ: Իսկ թե ինչ փուլում է տեխնոլոգիականի և «Գյուլոջյան»-ի հավատարմագրման գործընթացը, պարզ չէ:

Հունամիտար քոլեջի հետ կապված՝ նույնպես անորոշություն է:

ԱրՊՇ-ի հիմնադրողունը ընթանում է, վերաբացման ժամկետը հավանաբար նախատեսվածից ավելի ուշ կլինի: Մինչև պատերազմն էր խախտվել ժամանակացույցը: Սկզբնական պայմանավորվածությամբ շենքը պետք է շահագործման հանձնվեր 2020թ. սեպտեմբերին, բայց հետաձգվել էր մինչև 2021թ. սեպտեմբերի 1-ը: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին աշխատանքները մեծ թափով շարունակվում էին, ընդ որում, աշխատում էր 4 կազմակերպություն, բացի շինարարականից՝ ջեռուցման, օդափոխության, լուսավորության: Բայց հիմա, կախված այս դրությունից, դժվար է ասել, թե վերջնականապես երբ պատրաստ կլինի շենքը:

Մեր ճեպագրույցները

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ, բանասիրական ֆակուլտետի դեկան.



- Այն ուսանողների նկատմամբ, ովքեր կորցրել են բնակավայրը և այստեղ չեն և ի վիճակի չեն ներկայանալ, այլ մոտեցում կցուցաբերվի: Դասախոսական անձնակազմի կողմից նրանց կուղարկվի ողջ դասանյութը, և նրանք հետեցում կստանան: Այս պայմաններում մենք բոլոր տարբերակներն օգտագործելու ենք ուսումնական գործընթացը լիարժեք կազմակերպելու համար: Այս պահին համալսարանի ռազմավարության մեջ չիջն չի փոխվել, քանի որ այն, հաստատված 2019թ., արդեն իսկ նախատեսված էր պատերազմական երկրում ապրող ժողովրդի համար, այսինքն՝ համալսարանի որդեգրած ուղին կանխատեսում էր նաև այս օրը: Այդ առումով մեզ համար մեծ օգնություն էր մեր ներդրած հեռավար հարթակը՝ classroom-ը: Հենց այդ հարթակը հիմք դարձավ, որ մենք կարողանայինք հեռավար կարգով սկսել ուսումնական գործընթացը: Այն նաև ուսանողներին հնարավորություն է տալիս անձամբ հաղորդագրություն ուղարկել և տեղեկացնել իրենց վիճակի, իրադրության կամ որևէ փոփոխության մասին: Այս առումով համալսարանը շահեկան վիճակում է մյուս բուհերի համեմատությամբ:

Ուսումնական գործընթացում այսօր փոխվել է այն, որ սեղմվել է ժամանակացույցը, և դասախոսությունները նրկայացվում են հիմնադրույթների ձևով: Մինչ այդ դասախոսությունների փաթեթները ներբեռնված են եղել էլեկտրոնային հարթակում և հասանելի էին ուսանողներին՝ առարկայական նկարագրերը, հանձնարարականները: Սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում ուսանողներն արդեն ողջ կիսամյակի դասանյութը ստացել էին: Եվ հիմա, երբ արդեն անցել ենք ուսուցման ավանդական ձևին, կենդանի շփման միջոցով տրվում են այդ դասանյութի մեկնաբանությունը, անհասկանալի հարցերի պարզա-

բանումները: Դասապրոցեսի տևողությունն անփոփոխ է մնացել հենց այն հանգամանքով պայմանավորված, որ հաղորդելիքը շատ է. ծավալում է և պետք է հասցնել: Բանասիրական ֆակուլտետում՝ առկա բակալավրիատում ունենք 419 ուսանող, որոնցից 65-ը այն բնակավայրերից են, որոնք հանձնվել են թշնամուն: Հեռակա համակարգում սովորող 56 ուսանողներից 23-ը կորսված բնակավայրերից են: Ռեկտորատի նիստում հրահանգվել է, որ յուրաքանչյուր ֆակուլտետում աշխատանքները կազմակերպվեն՝ հիմք ընդունելով բոլոր դեպքերը. անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ և միմյանց օգնելով, աջակցելով հնարավորինս կազմակերպել այդ գործընթացը:


Ռուզաննա ՄԱՆՊԱՍՐՅԱՆ, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան.

- Դժվար է ստեղծված իրավիճակում մեր ուժերը վերագտնել և անցնել բնական գործընթացի, բայց մենք էլ պետք է պայքարենք այս ոլորտում: Կրթությունը ռազմավարական նշանակություն ունի: Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ հրատապ է դարձել մարդկային որակյալ կապիտալը կենտրոնացնելու, կրթության ոլորտում հաջողություններ արձանագրելու միջոցով ճիշտ դիվանագիտությամբ մեր նպատակին հասնելը: Այդ առումով, կարծում եմ, մեր ուսանողները մարտական են տրամադրված, ոգևորված են, որ հանդիպել ենք իրար:

Որպես տնտեսագետ՝ մտածում եմ, թե ինչ հունով դասավանդենք տնտեսությունը այս շրկային վիճակից դուրս բերելու համար: Մեր տնտեսությունը կաթվածահար եղավ և արտաքին, և ներքին գործոնների ազդեցությամբ: Եվ հետևանքները կկրենք դեռ երկար ժամանակ: Բավականին լուրջ խնդիրներ են առաջացել, մեծ մարտահրավերներ ծառայել տնտեսության առաջ: Անշուշտ, հարկ կլինի ճշգրտումներ կատարել երկրի ռազմավարական ծրագրերում, վարել արդյունավետ քաղաքականություն, որպեսզի արդյունքները տեսանելի լինեն, և բնակչությունը վստահություն ունենա կառավարության նկատմամբ, համատեղ ուժերով դուրս գանք ստեղծված իրավիճակից: Ինչ կախված է գինվորից, ինքն արել է: Յուրաքանչյուրս մեր ոլորտում պետք է պայքարենք մեր ուժերի առավելագույն չափով: Եթե ամեն մեկս մեր ոլորտում անենք մեզանից կախվածը, հաջողության կհասնենք:

Լարիսա ՄՈՐՁՈՅԱՆ, տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ ըստ ոլորտի» բաժնի առաջին կուրսի ուսանողուհի, կուրսի ավագ.

- Պատերազմից հետո առաջին օրն է, որ դասի ենք եկել: Ապագայի հանդեպ մեծ հույսեր ունենք, փորձում ենք շարունակել մեր առօրյան, որպեսզի լինենք ավելի կիրթ, դասնանք լավ մասնագետներ, մեր հաղթանակները տեղափոխենք տնտեսական դաշտ:



Ս. ՊԱՐԻԵՆՅԱՆ

ՈՒՂԵՐԶ

ԱՆ ՆԱԽԱԳԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ

**1** **Անվտանգություն.** Անշուշտ, մեր քաղաքացիների անվտանգության ապահովումը պետության գլխավոր առաջնահերթությունն է, քանի որ առանց անվտանգ միջավայրի հնարավոր չէ մնացած ոլորտներում հաջողություններ ու զարգացում արձանագրել: Այդ համատեքստում լիովին հասկանալի է, որ նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում քաղաքացիներին ու իշխանություններին ամենաշատ հուզող հարցերը վերաբերում են անվտանգությանն ու առնչվող անորոշություններին: Մի կողմից ունենք պատերազմի հետևանքով շուրջ երկուսուկես անգամ երկարած շփման գիծ աղբյուրների կողմից հետ, կոնկրետ հատվածներում անմիջական մոտեցումներ որոշ բնակավայրերի և խիստ սահմանափակված՝ Մայր Հայաստանի հետ հաղորդակցության միջոցներ, մյուս կողմից ունենք սուղ մարդկային ու տեխնիկական միջոցներ և սահմանափակ ժամանակ նոր առաջնագիծն ամրացնելու համար, իսկ երրորդ կողմից ունենք ողջ հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության շարունակական աջակցությամբ և Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի ներկայությամբ պայմանավորված անվտանգության երաշխիքներ:

Այժմ Արցախի իշխանությունները կատարում են հնարավոր ամեն ինչ մեր լիազորությունների ու կարողությունների սահմաններում առկա անվտանգային մարտահրավերներին չեզոքացման ու անորոշությունների հստակեցման ուղղությամբ, որոնց մի մասը կախված է նաև ամենաբարձր մակարդակի միջազգային բանակցությունների արդյունքներից: Այնուամենայնիվ, անկախ առկա օբյեկտիվ դժվարություններից՝ մեկ բան ակնհայտ է մեզ համար, այն է՝ Պաշտպանության բանակը, որը հայրենիքի աջակցությամբ, շարունակելու է իր գործառնություններն ու ջանքերը Արցախի բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման ուղղությամբ, որոնք լրացվում են Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի երաշխիքներով:

Այդուհանդերձ, աղբյուրների կողմը շարունակում է իր մշտական սադրիչ վարքագիծը, որի ցցում օրինակներից են վերջին օրերի նրանց գործողությունները խճուղիների ու Բերդաձորի հատվածներում: Պաշտպանության բանակի զինծառայողների և ռուս խաղաղապահների կողմից կանխվել են աղբյուրների զինծառայողների տարբեր սադրանքներ, իսկ երեկ երեկոյան նրանց դուրս են մղել Շուշիի Բին շեն գյուղի մերձակայքից: Այս օրերին Բերդաձորի ուղղությամբ ոչ մի անձ չի տուժել, իսկ հակառակորդին թույլ չի տրվել մուտք գործել որևէ բնակավայր: Ցավոք, խճուղիների ուղղությամբ մեր մի քանի տասնյակ զինծառայողներ գերի են ընկել աղբյուրների կողմից, և այժմ պաշտպանության նախարարությունը պարզում է բոլոր հանգամանքները: Ես անձամբ հետևողական եմ լինելու, որ այս միջադեպի մեղավորները ենթարկվեն իրավական պատասխանատվության: Նրանց արագ ու անվտանգ վերադարձը Հայրենիք պետք է լինի բոլորիս առաջիկա ջանքերի կիզակետում, և արդեն իսկ քայլեր ենք ձեռնարկում այդ ուղղությամբ:

Հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության ստանձնած խաղաղապահ մանդատը Արցախում՝ ակնհայտ է, որ նույնիսկ 9-ի եռակողմ հայտարարության դրույթների ու ձևավորված շփման գծի խախտումները հստակ անհարգալից վերաբերմունք է Ռուսաստանի և միջնորդական ջանքերի, և խաղաղապահ մանդատի նկատմամբ: Ուստի, Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դեկլարության հետ միասին աշխատում ենք ռուսական կողմի հետ, որպեսզի համատեղ կանխենք աղբյուրների սադրանքները, իսկ Պաշտպանության բանակը, իհարկե, զուգահեռաբար կատարում է իր պարտականությունները եղած հնարավորությունների սահմաններում:

րանքները, իսկ Պաշտպանության բանակը, իհարկե, զուգահեռաբար կատարում է իր պարտականությունները եղած հնարավորությունների սահմաններում:

**Արտաքին քաղաքականություն.** Արցախի Հանրապետության արտաքին քաղաքական ուղղություններն ու առաջնահերթություններն, ընդհանուր առմամբ, չեն փոխվել, սակայն կրել են փոփոխություններ իրենց ուժգնության առումով: Մասնավորապես՝ հարկ է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղություններն ու նպատակները.

- Արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունն Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումն է նաև քաղաքական գործիքակազմով: Պետք է Արցախի ու Հայաստանի Հանրապետությունների արտաքին քաղաքական ամբողջ ներուժը խելացի ու հետևողական կերպով սպասարկի այդ առաջնահերթ նպատակի իրագործմանը՝ ապահովելով կայուն, տևական ու արժանապատիվ անվտանգ միջավայր սեփական հայրենիքում ապրելու համար:

- Երկրորդ ուղղությունը Արցախի միջազգային կարգավիճակին առնչվող հարցերի հստակեցումն է, որը ենթադրում է Արցախի Հանրապետության անկախության միջազգային ճանաչում՝ հիմնված մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման փաստի անվերապահ ճանաչման վրա: Եթե նախապատերազմյան ժամանակահատվածում հակամարտության կարգավորման հիմքում դրված էին երեք հիմնական սկզբունքներ՝ ուժի և ուժի սպառնալիքի կիրառման բացառում, ժողովուրդների ինքնորոշման իրավունք և տարածքային ամբողջականություն, ապա այս պատերազմը պարզապես վերացրել է դրանցից երկուսի՝ ուժի սպառնալիքի բացառման ու տարածքային ամբողջականության սկզբունքների իմաստը: Մասնավորապես, աշխարհի համար քննարկումից դուրս է այն ճշմարտությունը, որ Ադրբեյջանն է դիմել ուժի կիրառման, որի ընթացքում համակարգված ու դիտավորյալ կերպով կատարել է մարդկությանը դեմ ուղղված և բազմաթիվ պատերազմական հանցագործություններ՝ Թուրքիայի ու վարձկանների ակտիվ մասնակցությամբ: Ընդ որում, այժմ ոչ մի տեսանկյունից չկա պնդելու, որ միջազգային հանրությունը ցանկություն ունի պատժելու Ադրբեյջանին՝ ուժի ապօրինի կիրառման և մարդկության դեմ հանցագործության համար: Բացի դրանից, ուժի կիրառման և քաղաքական պայմանավորվածության հետևանքով ոչ միայն Ադրբեյջանը չունի միջազգային ընկալմամբ տարածքային ամբողջականություն խնդիր, այլև այդ երկիրը վերջին պատերազմում բռնազավթել է 1991թ. հոչակյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պատկանող որոշ տարածքներ՝ ի լրումն 1990-ականներին զավթված այլ տարածքների՝ տասնյակ հազարավոր բնիկ հայերի դարձնելով անօթևան:

Ուստի, եթե երեք սկզբունքներից երկուսը դարձել են ժամանակավրեպ, ապա պարտադիր է անհապաղ կյանքի կոչել նաև երրորդ սկզբունքը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման փաստի ճանաչումը, որպեսզի հնարավոր լինի մտածել հակամարտության կարգավորման մասին: Այդ առումով կարևոր է հաշվի առնել և՛ Արցախի ժողովրդի կրած զրկանքներն ու տառապանքները, և՛ նոր գործողությունների առկա գոյաբանական վտանգները՝ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը դիտարկելով որպես փոխհատուցող ու կանխարգելիչ մեխանիզմ: Բոլորի համար հասկանալի է, որ միջազգայնորեն ճանաչված կարգավիճակը մշանակալի գործնական երաշխիքներ է տալու մեր ժո-

ղովրդի անվտանգության ու իրավունքների պաշտպանության ապահովման համար:

- Երրորդ ուղղությունը Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնումն է, որն ունի և՛ անվտանգային, և՛ հումանիտար նշանակություն մեր ժողովրդի համար:

- Զորորդ ուղղությունը մարդասիրական հարցերի կարգավորումն է, որը ներառում է թե՛ գերիներին ու անհետ կորածներին առնչվող խնդիրների լուծում, թե՛ տեղահանված անձանց իրենց բնակավայրեր վերադարձի ապահովում, թե՛ հոգևոր-մշակութային ժառանգության պատշաճ պաշտպանություն: Այդ համատեքստում նաև կարևոր է միջազգային մարդասիրական շարունակական աջակցության ապահովումը, որի առաջամարտիկն է դարձել օտարերկրյա պետություններից Ռուսաստանի Դաշնությունը՝ Արցախի ցուցաբերվող ուղիղ ու մեծածավալ աջակցությամբ: Հույս ունեն, որ այլ պետություններ ու միջազգային խոշոր կազմակերպություններ օրինակ կվերցնեն Ռուսաստանից՝ վերջապես կտրելով Արցախի միջազգային արհեստական մեկուսացման սառույցը: Անշուշտ, Հայաստանի Հանրապետության անվերապահ, մշտական ու անգնահատելի աջակցությունը Արցախին որևէ կերպ չի կարելի դիտարկել այդ տեսանկյունից, և խոսքը բացառապես միջազգային աջակցության մասին է:

- Հինգերորդ ուղղությունը սոցիալ-տնտեսական զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման միտված արտաքին քաղաքականությունն է, ինչի շնորհիվ պետք է ձգտենք միջազգային մեկուսացումը վերացնել նաև տնտեսական առումով:

**Հումանիտար և սոցիալական ոլորտ.** Արցախը վիրավոր է ոչ միայն մարդկային ու տարածքային կորուստների, այլ նաև ծագած բազմաթիվ և սուր մարդասիրական հիմնախնդիրների պատճառով՝ անհետ կորածներից ու գերիներից մինչև կացարաններ ու ավերված շինություններ, սոցիալական ապահովությունից մինչև հոգեբանական տրավմաներ: Ուստի, ի լրումն նախապատերազմյան ժամանակաշրջանում առկա մարտահրավերների ու կարիքների՝ այժմ ձևավորվել են նաև սոցիալական ծավալի նոր կարիքներ, ինչը ենթադրում է պետական իշխանության ավելի արդյունավետ ու պատասխանատու աշխատանքի անհրաժեշտություն: Մենք պետք է առաջին հերթին կարճ ժամանակահատվածում լուծենք մեր անօթևան քաղաքացիների կացարանների ու նվազագույն սոցիալական պայմանների ապահովման խնդիրները: Դրան զուգահեռ ու հատկապես դրանից հետո խնդիր ենք ունենալու բարենպաստ պայմաններ երաշխավորելու մեր բոլոր քաղաքացիների կյանքի որակի բարձրացման ու Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այդ տեսանկյունից նախատեսում ենք մեկնարկել մի շարք ծրագրեր, մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության հետ համատեղ կատարել առավելագույնը բոլոր գերիներին տուն վերադարձնելու ուղղությամբ, ինչպես նաև ակտիվորեն շարունակել զոհվածների մարմինների ու անհետ կորածների որոնողական աշխատանքները.

- Կարճ ժամկետում կարգավորել անօթևան քաղաքացիների ժամանակավոր կացարանների խնդիրը թե՛ տարբեր շինություններում կենտրոնացված տեղավորման, թե՛ բնակավայրի պատշաճ փոխհատուցման, թե՛ արագ բնակարանաշինության և հնարավոր այլ ծրագրերի միջո-

ցով.

- Երեք տարում բոլոր անօթևանների ապահովել բնակարանային պայմաններով.

- Առաջիկա երեք տարում քաղաքացիների փոխարեն վճարել իրենց հիփոթեքային վարկերի գումարներն ու դրանց տոկոսները.

- Զգալի աջակցություն ցուցաբերել ֆիզիկական ու իրավաբանական անձանց վարկերի սպասարկման մասով.

- Եականորեն մեծացնել շինանյութերի հատկացման ծրագիրը՝ գյուղերի բնակ-ֆոնդի պայմանների բարելավման նպատակով.

- Մեկնարկել է նաև անօթևան քաղաքացիների բնակավայրի փոխհատուցման ծրագիրը.

- Հայաստանի Հանրապետության հետ համատեղ մեկնարկել և շարունակվում է ոչ զինապարտ արցախցիներին ցուցաբերվող միանվագ ֆինանսական աջակցության ծրագիրը.

- ՀՀ հետ համատեղ արդեն գործում է նաև անօթևան մնացած քաղաքացիների 300,000 կամ 250,000 ՀՀ դրամ աջակցության ցուցաբերման ծրագիրը՝ կախված բնակության վայրից.

- Առնվազն վեց ամիս շարունակ գործազուրկ քաղաքացիներին հատկացնել ամսական 68,000 ՀՀ դրամ սոցիալական աջակցություն.

- Առնվազն մեկ տարի շարունակ սուբսիդավորել գազի, էլեկտրաէներգիայի, կապի ֆիքսված ծավալների սպառումը և այլ կոմունալ ծախսերը՝ ճկուն հարաբերակցությամբ՝ ըստ սպառողների նախընտրության ու կարիքների, իսկ հայտարարված սահմանափակումը կբարձրացվեն.

- Հայտարարել հարկային համաձայնագրեր և սահմանել հարկային լայն արտոնություններ.

- Գույքագրել պատերազմի հետևանքով արձանագրված նյութական վնասները՝ հետագայում քննարկելու համար փոխհատուցումներ տրամադրելու հնարավորությունները.

- Երեք տարում ասֆալտապատել բոլոր գյուղեր տանող ճանապարհները:

Իհարկե, մշվածները պետական ծրագրերի միայն մի մասն են, և առկա ճգնաժամից դուրս գալուն միտված կարճաժամկետ ծրագրերից հետո մշակելու և իրագործելու ենք ավելի երկարաժամկետ զարգացման ծրագրեր: Այս և այլ ծրագրերի կյանքի կոչումը հնարավոր է լինելու ոչ միայն Արցախի Հանրապետության միջոցներով, այլ նաև Հայաստանի Հանրապետության, համայն հայության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Ռուսաստանի Դաշնության գործուն աջակցության շնորհիվ: Հուսամ՝ միջազգային տարբեր կազմակերպություններ ու այլ օտարերկրյա կառավարություններ ևս կհետևեն Հայաստանի ու Ռուսաստանի օրինակներին և Արցախի կցուցաբերեն շարունակական և ուղղակի մարդասիրական աջակցություն:

**Ներքին քաղաքականություն.** Ծանր կորուստներով պատերազմն ինքնին պետական ու քաղաքական համակարգերի համար ճգնաժամի մեծ աղբյուր է: Մյուս կողմից, պատերազմական ու հետպատերազմյան ժամանակաշրջանում ցանկացած պետության անհրաժեշտ է ներքին կայունություն ու միասնական աշխատանք, այլապես ճգնաժամները կարող են երկար տևել ու խորանալ: Ինձ համար, բնականաբար, ընկալելի են Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության իշխանություններից պա-



### ՈՒՂԵՐԶ

տերազմի արդյունքների ու առկա իրավիճակի վերաբերյալ պարզաբանումներ պահանջելու միտված գործողությունները, քանի որ յուրաքանչյուր իշխանություն պետք է պատասխանատու լինի իր լիազորությունների կատարման ու չկատարման համար և հաշվետու՝ ժողովրդի առջև: Այո, Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ինձ վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն եմ կրում այս իրավիճակի համար, սակայն որևէ մեկին պատասխանատվության եմ քարկելիս հարկ է տարանջատել թացը չորից, օբյեկտիվ պատճառները՝ սուբյեկտիվ մեղքերից, ցանկությունները՝ հնարավորություններից: Օրինակ, եթե Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության ու անվտանգության երաշխավորն է, արդյո՞ք ունեցել եմ ներքին ու արտաքին բավարար հնարավորություններ ու լծակներ այս լայնածավալ պատերազմում լիովին երաշխավորել նշված չորս արժեքները և արդյո՞ք ինձնից կախված առավելագույնը չեմ կատարել այդ ուղղությամբ: Կամ եթե Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը Ձինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, ապա ո՞ւմ համար է գաղտնիք, թե իրականում Պաշտպանության բանակն ինչպես ու որտեղից է կառավարվում և թե որքանով է Արցախի Հանրապետության նախագահն ընդգրկված այդ գործընթացներում: Սահմանադրական լիազորությունների ու իրական կյանքում գործառույթային խիստ սահմանափակումների միջև մեծ տարբերության պայմաններում ես, իմ կարծիքով, կատարել եմ հնարավոր ամեն ինչ նպաստ բերելու Հայրենիքի պաշտպանության կարևորագույն գործին՝ անկախ իմ պաշտոնական ու ոչ պաշտոնական լիազորություններից ու հնարավորություններից:

Այս 44-օրյա պատերազմում կան երեք հիմնական հարցեր ու դրանցից բխող քննադատություններ: Առաջինն այն է, թե արդյոք ճիշտ էր պատերազմը կանգնեցնել նոյեմբերի ինձին այդ պայմաններով, և այդ հարցին անկեղծորեն պատասխանել եմ քանիցս, որ այդ պահին այլընտրանքն ավելի մեծ մարդկային ու տարածքային կորուստներն էր, ընդհուպ՝ լրիվ հայրենագրվումը: Երկրորդ հարցն այն է, թե արդյո՞ք հնարավոր չէր ավելի շուտ դադարեցնել պատերազմը հարաբերականորեն ավելի լավ պայմաններով ու ավելի քիչ կորուստներով, իսկ երրորդը, թե արդյո՞ք հնարավոր չէր նախօրոք այնպես անել, որ հայկական Ձինված ուժերը ավելի լավ պատրաստված լինեին պատերազմին: Վերջին երկու հարցերի պատասխաններն էլ դրական են, սակայն մանրամասնորեն կանոնադառնա մեկ այլ առիթով...

Այնուամենայնիվ, անկախ առկա իրավիճակի համար իմ իրական ու օբյեկտիվ պատասխանատվության չափից՝ պատերազմից հետո ես պատրաստ էի վայր դնել Հանրապետության նախագահի իմ լիազորությունները, սակայն մի քանի հիմնական պատճառով չզնայի այդ քայլին:

- Նախ՝ արդյո՞ք հետպատերազմյան հունանիտար աղետի առերեսված ու բազմաթիվ զրկանքների մեջ խրված Արցախը, արագ համախմբվելու և ժողովրդի առկա կարիքներով զբաղվելու փոխարեն, պետք է անցնեք քաղաքական լարվածության ու կառավարման անկայունության մի երկարատև փուլ: Կարծում եմ՝ պատասխանը պարզ է. առնվազն անմեղսունակ պետք է լինել ժողովրդի դարդերը թողնելու և ներքաղաքական պայքարի կրկեսը մտնելու համար.
- Երկրորդ՝ արդյո՞ք արտաքին ու անվտանգային լրջագույն մարտահրավերներ

րի պայմաններում որևէ մեկը համոզված է, որ պատշաճ կամ նույնիսկ նվազագույն չափով երաշխավորված միջավայր ունենք արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրություններ կազմակերպելու և կայացնելու համար.
- Երրորդ՝ պետք չէ մոռանալ նաև սահմանադրական կարգավորումների մասին, որոնք այնպես են կառուցված, որ այս փուլում նախագահական ու խորհրդարանական արտահերթ ընտրությունները կարող են առաջացնել սահմանադրական ճգնաժամ՝ խորացնելով ընդհանուր պետական ճգնաժամը.

• Չորրորդ և վերջապես՝ ես պատասխանատվությունից խուսափող մարդ չեմ, հակառակը՝ այս ծանր շրջանում ստանձնում եմ լրիվ պատասխանատվություն մեր Հայրենիքն ու ժողովրդին հետպատերազմյան ճգնաժամից հանելու հարցում: Իսկ ինչ վերաբերում է պատերազմի ընթացքում իմ և այլ պաշտոնատար անձանց գործողություններին ու վարքին, ապա ողջունում եմ հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից իրավապահ մարմիններ ներկայացված հաղորդումը հնարավոր պետական դաժանության ու այլ ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ: Ես պատրաստ եմ ամբողջությամբ աջակցել իրավապահ մարմիններին արդյունավետ քննություն անցկացնելու այդ գործի մասով, պատրաստ եմ նաև անձամբ պարզաբանումներ ներկայացնելու: Իսկ ինչ վերաբերում է հետաքննության արդյունքներին ու դրանցից բխող գործողություններին, ապա ոչ միայն պատրաստ եմ կրել իմ բաժին պատասխանատվությունը, այլ նաև պարտավոր եմ իմ լիազորությունների շրջանակներում հնարավորինս կատարել կոնկրետ հարցերում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և վերհանված խնդիրները լուծելու ուղղությամբ:

Այժմ գալով իմ որոշումներին ու ապագա անելիքներին, կուզեի շեշտադրել հետևյալ կետերը.

- Սկսել եմ քաղաքական խորհրդակցություններ խորհրդարանական ու արտախորհրդարանական բոլոր հետաքրքրված ուժերի և հասարակական տարբեր խմբերի հետ, որպեսզի համատեղեմք մեր ջանքերը այս ճգնաժամը հաղթահարելու հարցում: Արդեն մի շարք ուժերի հետ ունենք կոնկրետ պայմանավորվածություններ ու ջանքերի մեկտեղում, այլուց հետո շարունակում ենք քննարկումները, և տեսնում եմ հնարավորությունը բոլորի հետ փոխգործակցելու: Հարկ է ընդգծել, որ համագործակցությունը պետք է լինի լայն ընկալմամբ, այլ ոչ թե սահմանափակվի քաղաքական պատասխանատվության ստանձնմամբ տարբեր պաշտոններում կոնկրետ անձանց նշանակման տեսքով: Այսինքն, յուրաքանչյուր կարողունակ ու սրտացավ ուժ ու անձ պետք է հնարավորություն ստանա իր ներուժը ծառայեցնելու մեր նույնական նպատակի կյանքի կոչմանը, իսկ այդ ճանապարհին ես միշտ բաց եմ լինելու բոլոր ուժերի ու անձանց հետ համագործակցելու հարցում.

- Թեև Սահմանադրությունը Հանրապետության նախագահին օժտում է լայն լիազորություններով, սակայն նշված համագործակցության ու միասնականության տրամաբանությունից ելնելով՝ պատրաստակամ եմ Հայրենիքի ու ժողովրդի համար կենսական նշանակության որոշումները կայացնել Ազգային ժողովի, Անվտանգության խորհրդի և ավելի լայն հասարակական-քաղաքական շրջանակների հետ համախորհուրդ: Ընդհանրապես, հանրային քննարկումների անցկացումը պետք է դառնա մեր քաղաքական մշակույթի ու կառավարման համակարգի օրգանական մասը.

• Որոշել եմ հրաժարվել «Ազատ հայրենիք» կուսակցության նախագահի պաշտոնից և դուրս գալ կուսակցությունից, որպեսզի Հանրապետության նախագահի պաշտոնում ես կարողանամ գործել և ընկալվել որպես պետության վերելուսակցական գլուխ, որպես մի գործիչ, որը պետք է ընդունվի որպես հատկապես ճգնաժամային իրավիճակներում համախմբող անձ.

• Միևնույն ժամանակ գիտակցելով պատերազմի հետևանքով առաջացած հանրային ու քաղաքական որոշակի տրամադրությունները Հանրապետության նախագահի պաշտոնից իմ հրաժարականի անհրաժեշտության մասով՝ կուզեի նշել, որ պատրաստ եմ հրաժարական տալ առաջին իսկ հնարավորության դեպքում, երբ Հանրապետությունը ներքին ու արտաքին պայմանների ու սահմանադրական կարգավորումների առումով պատրաստ լինի պատշաճորեն ու արժանապատվորեն հաղթահարել նախագահական ու խորհրդարանական ընտրությունների ծանր դժվարությունները.

• Առաջիկա օրերին հաստատելու եմ կառավարության նոր կառուցվածքը՝ օպտիմալացնելով տարբեր գերատեսչություններ, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել դրանց աշխատանքի արդյունավետությունը և խնայել հանրային միջոցները.

• Հաստատելու եմ նաև կառավարության նոր կազմը՝ կատարելով նշանակալի կադրային փոփոխություններ, այդ թվում՝ ուժային կառույցներում: Ընդգծեմ, որ նոր կադրերի ընտրության հարցում հնարավորինս առաջնորդվելու եմ նրանց մարդկային ու մասնագիտական արժանիքներով և հանրային հեղինակությամբ.

• Արցախի Հանրապետության պաշտպանությանն ու անվտանգությանն առնչվող՝ Նախագահի բոլոր հրամանագրերն ու կառավարության որոշումներն ընդունվելու եմ բացառապես Անվտանգության խորհրդի դրական եզրակացությամբ, մնացած մարմինների կողմից ընդունվող վերաբերելի իրավական ակտերի մասով եզրակացություններ տալու համար կմշակվեն համապատասխան մեխանիզմներ.

• Անվտանգության խորհրդի կազմը կընդլայնվի, որում ընդգրկված կլինեն ոչ միայն կոնկրետ լիազոր պաշտոնատար անձինք, այլ նաև հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների ներկայացուցիչներ:

**Պետական կառավարում.** Այժմ պետական կառավարման համակարգն, ընդհանուր առմամբ, ճգնաժամի մեջ է, որը բացասականորեն է անդրադառնում պատերազմի հետևանքների հաղթահարման աշխատանքների արդյունավետության վրա: Ուստի, նախատեսում եմ մի քանի օրվա մեջ կատարել բոլոր հիմնական կառուցվածքային ու կադրային փոփոխությունները և արագացնել ու բազմապատկել հրատապ հիմնախնդիրների լուծման ջանքերը: Ժողովրդի հրատապ կարիքների գոնե նվազագույն բավարարումից հետո մենք պետք է ձեռնամուխ լինենք կառավարման բարեփոխումների, որոնց մի մասը նախատեսել էինք նախապատերազմյան ժամանակահատվածում, իսկ մնացածի կարիքը դրսևորվել է պատերազմական ու հետպատերազմյան պայմաններում: Այդ երկարատև բարեփոխումների արդյունքում կբարելավվեն հանրային ծառայողների մասնագիտական կարողությունները, կբարձրանա վարչարարության, քաղաքացիների սպասարկման, հանրային միջոցների ծախսման, պետական ծրագրերի իրականացման և մի շարք այլ գործընթացների ու ինստիտուտների արդյունավետությունը: Պետական կառավարման բոլոր մարմիններից ու պաշտոնատար անձանցից պահանջում եմ կատարել չափազանց պատասխանատու ու սրտացավ աշխատանք

հետպատերազմյան ծանր մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ: Մեզնից ոչ ոք բարոյական իրավունք չունի գլուխը հանգիստ բարձին դնելու, եթե գիտի, որ իրենից է կախված գոհվածի կամ անհետ կորածի հարազատի, վիրավորի, անօթևանի կամ մեկ այլ խոցելի անձի այս կամ այն հարցի լուծումը: Մեզնից ոչ ոք իրավունք չունի իրեն թույլ տալ շռայլություններ, երբ շատ անձինք զրկված են կյանքի նվազագույն պայմաններից, երբ գոհվածների ու անհետ կորածների զավակները կարիք ունեն պարզ ուշադրության: Յուրաքանչյուր հանրային ծառայող պետք է գիտակցի, որ այժմ Արցախի բոլոր բնակիչները այսպես թե այնպես խոցելի են, և բոլորս պարտավոր ենք ծառայել նրանց, պարտավոր ենք ինքներս սրտացավության ու ծառայության օրինակ լինել մնացածի համար: Ես ակնկալում եմ, որ մեր հասարակությունում երկար ժամանակ կտիրի փոխօգնության ու համերաշխության աննախադեպ մթնոլորտ, ինչի շնորհիվ մեզ կհաջողվի արագորեն հաղթահարել այս ճգնաժամային իրավիճակը:

Ի դեպ, նշվածի համատեքստում կուզեի անդրադառնալ նաև առաջնագծում ու թիկունքում սեփական պարտականությունների կատարումից խուսափած անձանց վերաբերյալ հանրային տրամադրություններին: Այո, հանրության մեջ առկա է իրավացի պարսավանք ու պահանջկոտություն նրանց հանդեպ, և՛ բարձրատիճան պաշտոնատար անձինք, և՛ հանրային ծառայության ցածր օղակի, և՛ մասնավոր հատվածի տարբեր աշխատակիցներ այդ հիմքով հեռացվել են աշխատանքից: Պատերազմի ընթացքում ես հրապարակել եմ աշխատանքից ազատված որոշ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ցանկը: Ավելին, առաջնագծի ու թիկունքի դասալիքները կպետք է հետագայում նույնպես որևէ հնարավորություն ստանան բարձրաստիճան պաշտոն գրադնեցնելու, քանի որ ժողովրդի համար ամենավճճապահ պահին իրենց պարտականությունների կատարումից խուսափած անձինք պարզապես չեն կարող բարեխղճորեն ծառայել նույն ժողովրդին: Իսկ ինչ վերաբերում է ցածր օղակի աշխատակիցներին, ապա հաշվի առնելով դեպքերի բազմազանությունը, ծագած որոշ իրավական հիմնախնդիրներն ու առկա ծավալները՝ այդ հարցը պետք է առանձին ուսումնասիրության առարկա դառնա, որպեսզի արդար որոշումներ կայացվեն: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ խրախուսանքի միջոցներ կիրառելիս գործատուները պետք է անպայման հաշվի առնեն տվյալ աշխատակցի վարքը պատերազմի ընթացքում՝ բացառելով անարդար որոշումները բարեխիղճ աշխատակիցների նկատմամբ:

#### Միրելի՛ հայրենակիցներ

Հիմնախնդիրներն ու մարտահրավերները չափազանց շատ են այս ժամանակահատվածում՝ երբեմն անկառավարելի ու անորոշ մեզ համար: Սակայն մեր նախորդ ու գալիք սերունդների առաջ պարտավոր ենք ամուր կանգնել Հայրենիքի փրկության ու զարգացման դիրքերում: Մենք ազգովի վճռական ենք պատվով դուրս գալու այս ծանր իրավիճակից, ուղղելու մեր մեջքը և առաջ շարժվելու մեր պատմական երթունք: Մենք պարզապես իրավունք չունենք ձախողվելու այս փուլում, ինչը կարող է նշանակել բոլոր փուլերի ձախողում: Սա մեր արդար պայքարն է՝ մեր նախնիների պայքարի բնական շարունակությունը, և մենք միանշանակ հաջողվելու ենք:

Ամրություն, անվտանգություն ու հարատևում Հայոց Սուրբ Հայրենիքին:

ԸՆԴՐԵՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՆՊԱԼԻԶՄԻ

ԱՆ ԿԳՄ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԱՄԱԿՈՎ ԳԻՄԵԼ Է ՄԱԿ-Ի ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՕԳՐԻ ԱԶՈՒԼԵԻՆ (ՅՈՒՆԵՍԿՕ)

Նամակում նախարարն անդրադարձել է պատմամշակութային մեծ արժեք ունեցող և հայ ժողովրդի հավատքի ու հավերժության խորհրդանիշը հանդիսացող Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ Մայր Տաճարի ռմբակոծմանը՝ համարելով այն անմեղելի ոտնձգություն համաշխարհային քրիստոնեական քաղաքակրթության դեմ:

«Ձերոգ գերազանցություն, 2020 թվականի հոկտեմբերի 8-ին Ադրբեջանի զինված ուժերը երկու անգամ հարձակվել են Արցախի Հանրապետության Շուշի քաղաքում գտնվող Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց հայկական եկեղեցու վրա: Երկրորդ հարձակումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ լրագրողները մեկտեստավորում էին առաջին հարձակման հետևանքները: Արդյունքում եկեղեցին լրջորեն վնասվել է, վիրավորվել են երկու լրագրողներ և նրանց ուղեկցող անձը: Երկրորդ հարձակումը կասկած չթողեց, որ հարձակումը դիտավորյալ էր:

Եկեղեցին կառուցվել է 1868-1887 թվականներին և ընդգրկված է Արցախի Հանրապետության մշակութային և պատմական հուշարձանների ցուցակում: Այն Արցախի հոգևոր կենտրոնն է և ամենամեծ հայկական եկեղեցիներից մեկը:

Ժողովուրդների մշակութային ու հոգևոր ժառանգությունը հանդիսացող պատմական հուշարձանների, արվեստի ստեղծագործությունների և պաշտամունքի վայրերի դեմ ուղղված հարձակումն արգելված է պայմանագրային և սովորութային միջազգային մարդասիրական իրավունքով: Մշակութային հուշարձանների

ոչնչացումը որպես ռազմական գործողությունների մաս պատերազմական հանցագործություն է:

Եկեղեցու վրա հարձակումը եզակի և պատահական դեպք չէ, այլ Ադրբեջանի հակահայկական քաղաքականության մաս կազմող տարածված և կանոնավոր արակտիկայի դրսևորում: Կան ծանրակշիռ ապացույցներ, որոնք վկայում են Բաքվի իշխանությունների կողմից Ադրբեջանի Հանրապետության տարածքում հայկական քաղաքակրթության բոլոր հետքերի կանխամտածված ոչնչացման մասին: Նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում գտնվող և հայկական մշակութային ժառանգությունը ներկայացնող շուրջ 11000 հուշարձաններ դարձել են Ադրբեջանի իշխանությունների բազմամյա համակարգված քաղաքականության թիրախը, որի նպատակն էր՝

- ոչնչացնել այդ հուշարձանների մասին գրառումները պաշտոնական հրատարակություններում, տեղեկատու գրքերում և ուղեցույցներում,
- կեղծել դրանց էթնո-մշակութային և կրոնական պատկանելությունը,
- մպաստել դրանց կանխամտածված ոչնչացմանը,
- հայկական քրիստոնեական եկեղեցիները վերածել աշխարհիկ կամ մահմեդական կրոնական շենքերի,
- խոչընդոտել դրանց վերականգնմանը:

Նման քաղաքականությունը հանգեցրել է հարյուրավոր եկեղեցիների, մատուռների և գերեզմանատների ոչնչացման, որոնք հիմնականում գտնվում էին Արցախում և Նախիջևանում: Միայն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնա-

վար Մարզի տարածքում, որը գոյություն է ունեցել խորհրդային շրջանում և կազմում էր պատմական Հայաստանի Արցախ նահանգի միայն մի մասը, կար առնվազն 1700 պատմական և ճարտարապետական հուշարձան, ներառյալ՝ բերդեր, վանական համալիրներ, եկեղեցիներ և մատուռներ, կամուրջներ, պալատական շենքեր, խաչքարեր, ինչպես նաև պատերի և գերեզմանաքարերի ավելի քան 1000 արձանագրություններ՝ հին հայերեն լեզվով:

Օրինակ՝ 20-րդ դարի ընթացքում, հատկապես հայկական Նախիջևանը խորհրդային Ադրբեջանի իրավասության տակ տեղափոխելուց հետո իրականացվել է տարածաշրջանում հայկական հնագույն մշակութային ժառանգության ամբողջական ոչնչացման քաղաքականություն: 1998-2005 թվականներին Ադրբեջանի իշխանությունները ծանր շինարարական տեխնիկայի կիրառմամբ ամբողջությամբ ավերել են Հին Ջուղայի գերեզմանատան ավելի քան 3000 միջնադարյան խաչքարերը: Գերեզմանատան տարածքը վերածվել է ռազմական հրաձգարանի: Գոյություն ունեն բազմաթիվ ապացույցներ, ներառյալ՝ լուսանկարներ և տեսանյութեր, ինչպես նաև Գիտության զարգացման ամերիկյան ասոցիացիայի կողմից արված արբանյակային լուսանկարներ, որոնք պատկերում են խաչքարերի ոչնչացումը Հին Ջուղայում:

Մինչդեռ Արցախի տարածքում գտնվող մշակութային և պատմական հուշարձանների պահպանությունն ու օգտագործումը սահմանվում է Արցախի Հանրապետության

Սահմանադրությամբ, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1999թ. օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով: Այդ օրենքների կիրառման ամենավերջին օրինակներից է 2019թ. հոկտեմբերին Շուշի քաղաքի Վերին մզկիթի վերականգնումը:

Ձերոգ գերազանցություն, մենք հորդորում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ին և անձամբ Ձեզ՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ վերջ տալու Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության տարածքի մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացմանը, ինչը պատերազմ վարելու արգելված մեթոդ է: Հուսով ենք, որ ձեր կազմակերպությունը կաջակցի համաշխարհային կրոնական ժառանգության գլոբալ գործոց հանդիսացող մշակութային սեփականության պաշտպանության հարցում:

Հարգանքով՝  
Լուսինե ՂԱՐԱՍԽԱՆՅԱՆ  
10 հոկտեմբերի, 2020թ.

Հ.Գ. «Շուտով Արցախում է լինելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչների խումբը, որի հետ նորից մշտադիտարկման ենք ենթարկելու թշնամու վերահսկողության տակ հայտնված հուշարձանները: Մենք պետք է վարենք շարժական ու անշարժ մշակույթի ժառանգության պահպանման քաղաքականություն, և մշակույթի ոլորտում վարվող քաղաքականությունը կփոխվի դեպի հուշարձանների և մշակութային ժառանգության հանրայնացում ու հանրահռչակում»,- ասել է Լ. Ղարախանյանը:

խոսք հիշատակի  
ԲՈՐԻՍ ԲԱԲԱՅԱՆ



Անվանի ջութակահար Բորիս Բաբայանի մահվան կապակցությամբ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը ֆեյսբուքում ցավակցական խոսք է գրել, որում ասվում է.

«Լեռնային անվանի ջութակահար, ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ Բորիս Բաբայանի երաժշտության ելևէջները: Իմ հայրենակցի՝ բոլորիս հայտնի «սկրիպաչ Բորյայի», Արցախյան պատերազմի վետերանի, լուսավոր մարդու հրաժեշտը կյանքին 72-րդ տարում եղավ: Կենսակերպով մաքուր երաժիշտ լեզնդ էր, երաժիշտ երևույթ, մարդ պատմություն: Մարդուն զինաթափող նրա զենքը սերն էր ու երաժշտությունը: Առասպելական մախարակությամբ էր մատները հարմը ջութակին, երբ ուսուցանում էր իր բազմաթիվ սաներին: Ջութակն աննկարագրելի զգացմունքայնությամբ խոսում էր, երբ մոտենում էր Ստեփանակերտի հուշահամալիրում և Երևանի «Եռաբլուրում» հանգչող մեր պայծառ տղաների շիրիմներին: Նմանակների հետ դա մի հաղորդակցություն էր, որով վիշտ էր փարատվում, մեղմվում կարոտ, փոխանցվում սեր ու խոնարհում, երազանք ու խաղաղություն:

Անձամբ իմ և ԱՀ ԿԳՄ նախարարության անունից Բորիս Բաբայանի հարազատներին, մերձավորներին, գործընկերներին, սաներին, նրա արվեստի երկրպագուներին ու նրան բոլոր ճանաչողներին հայտնում եմ մեր խորին ցավակցությունը: Համոզված եմ՝ հանգուցյալի հնչեցրած հոգեպարար երաժշտությունը դեռ երկար հիշվելու և ուղեկցելու է սերունդներին:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԵՏ

Դեկտեմբերի 8-ին Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սասուն Բարսեղյանը հանդիպում ունեցավ շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների հետ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակվածների հիշատակը:

Ողջունելով ներկաներին՝ շրջվարչակազմի ղեկավարն ասաց.

- Այսօրվա մեր հանդիպումը ճանաչողական բնույթ է կրում, մենք հավաքվել ենք իրար լսելու, քննարկելու ի հայտ եկած խնդիրները, մտածելու դրանց լուծումների մասին:

Չարաքաստիկ պատերազմն արեց իրենը, և մենք ունենք այն, ինչ ունենք: Պարտված պատերազմական գործողությունների արդյունքում ունենք հազարավոր զոհեր ու ծանր վիրավորներ, որոնցից շատերը հաշմանդամ են դարձել, ունենք տարածքային մեծ կորուստներ: Մենք զրկվեցինք ջրային ռեսուրսներից, գյուղատնտեսական մշակութային բերրի տարածություններից, ծաղկուն բնակավայրերից: Մենք ունենք փակված կրթօջախներ, առանց աշխատանքի մնացած լավագույն մասնագետներ:

Մեր պետության առջև դրված են բազմաթիվ խնդիրներ, որոնցից ամենաառաջինը տեղահանված բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովելն ու նրանց մասին

հոգ տանելն է: Անշուշտ, մեր ուշադրության կենտրոնում է լինելու տեղահանված հայայնների դպրոցների ուսուցիչներին աշխատանքով բավարարելը:

Անհերքելի փաստ է, որ պետության ուշադրության կենտրոնում միշտ եղել և մնում է կրթության հանդեպ առանձնահատուկ մոտեցումը: 21-րդ դարի պահանջները սերունդներին կրթելն ու սնելն է: Տեսնում ենք, թե ինչպես է աշխարհը սրընթաց զարգանում, դրա ակամատեսը եղանք այս պատերազմում, երբ թշնամին օգտագործում էր նորագույն զինտեխնիկա:



Եղեռն տեսած ազգը, որ իր մեջ ուժ է գտել գոյատևել, ստեղծել պետականություն, իրավունք չունի նահանջել: Իսկ որ պատմությունը կրկնվելու միտում ունի, անհերքելի է: Ուրեմն,

մենք պետք է վերստին ուղղենք մեր կոտրված մեջքը, անենք հնարավորն ու անհնարինը, ստեղծենք, կրթենք ու սնենք մեր երեխաներին, քանզի հայը դրան է դատապարտված:

Հուսանք՝ այս իրավիճակից կկարողանանք դուրս գալ և հաղթահարել ետպատերազմյան այս ծանր շրջանը:

Աստղաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Սլավա Գրիգորյանի ելույթը լցված էր ցասունով. «Այսօր հակասական շատ տրամադրություններ կան: Ասում ենք՝ եկեք մեղավորներ

նախ է, չհարցնե՞նք, թե ինչ է պատահել, ոնց է պատահել: Ինչո՞ւ ենք լռում, վերջապես մենք ենք հայրենիք կորցրել, մեր ժողովուրդն է անարդար տեղահանվել:

Մենք պատասխան ենք ուզում և այն ակնկալում լսել նրանցից, ովքեր այս ողջ ընթացքում պատասխանատու են եղել բոլոր գործողությունների համար: Հարկավոր է, որ ասվի ճշմարտությունը, և դա լինելու է մեր՝ մտավորականների պահանջը:

Բոլորս ապրում ենք հոգեբանորեն ծանր մի շրջան, որի հաղթահարումը շատ դժվար էմ տեսնում, սակայն մատաղ սերունդին կրթելը մենք շարունակելու ենք իրականացնել մույն պատասխանատվությամբ:



Ապրուշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Սերգեյ Գասպարյանը, կիսելով բոլորի մտահոգությունները, միաժամանակ մշտ, որ այսօր հավաքվել են կրթության ոլորտի՝ շրջանը ներկայացնող կոլեկտիվների տնօրենները: Խավ, որ սրտանց կատարում է այն, ինչին կոչված է և այսուհետ էլ կշարունակի իր առաքելությունը:

Այնուհետև ներկաները բարձրաձայնեցին իրենց մտահոգող հարցերի մասին, որոնց շրջվարչակազմի ղեկավարը տվեց պատասխաններ:

ՊԵՏԷ Է ԸՆԿՍՍՆ

Արարարյան դաշտում, Արարսի հովիտում... Էսօր նստած է մի հոծ հայ զանգված: Նույնը պետք է լինի եւ Եփրատի կամ Ալաշկերտի հովիտում: Էդ երկու հովիտները, Արարսի ու Եփրատի հովիտները, մեր սրբազան հովիտներն են: Մեկը մեր Մայր Գեղն է, մյուսը մեր սրբազան Գեղը:

Էն հովիտի վրա, ուր հեթանոս հայր Վարդապետ ու Ծաղկազարդ պաշտել է իր Անահիպն ու Ասարդիկը, իր Արամազդն ու Վահագնը: Էն հովիտի վրա, ուր հայ ժողովուրդը իր Մեծ Տրդատի հետ միասին մկրտվել է Արածանու սուրբ ջրերում, քրիստոնեություն է ընդունել, ու իր մկրտության րեդը րաճար է կանգնել, ճակատին դրոշմել: Ով կրնիցի էս վեմի վրա՝ կջախջախվի, իսկ ում վրա սա կրնիցի՝ կհոսի ջրի պես: Էն հովիտի վրա, ուր հայ ժողովուրդը դարերով ճակատ-ճակատի է զարկել հին Պարսկաստանի ու Արեւելքի բոլոր աշխարհակալների հետ: Էն հովիտի վրա, ուր փռված է Չիրալի դաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշականունիները, Բագրատունիները, Մամիկոնյանները ու Արծրունիները: Էն հովիտի վրա, որին շրջապատել են Ծաղկանց լեռները, Բարթոռի շրջան, Նպարն ու Սուկավեդը, որի վրա, իր ալեւոր գլուխը մինչեւ երկինք բարձրացրած, հսկում է Ազար Մասիսը... Անդիմադրելի դեպի էն հովիտն են չգվում մեր սրբերը, մեր մարերը, մեր հոգիները: Էնպեղ է մեզ համար էն ամենը, ինչ որ մի ժողովրդի դարձնում են մեծ, գեղեցիկ, էն ամենը, ինչ որ մի ժողովրդի կյանք ու ոգի են րայիս: Գեպի մայր Արարսի ու Սրբազան Եփրատի նվիրական հովիտները:

Եվ նույնիսկ էսօր էլ, թեպետև իր հայրենիքի մի ծայրից մինչեւ մյուսը հռչակված ու արյունաքարախ, միայն խորապես խոցված ու ծանր վշտացած է հայր եւ ոչ թե խորտակված ու հուսահատ, եւ չի դադարել սրեղծագործության ոչ մի ասպարեզում: Սրանից ավելի մեծ ի՞նչ ազնվականության վկայական կարող է ներկայացնել աշխարհին մի ժողովուրդ: ...մենք միշտ ունեցել ենք էդ բարձր վկայականը: Բայց էդ վկայականը էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն է ու ասված են դրել իրենց կնիքը...

Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸ ԴԱՏԵՐԱԶՄԻՑ ԶԵՏՈ

Վերջապես սկսվեց ուսումնական գործընթացը նաև Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում: Անհամբերությամբ, նաև անհանգստությամբ էի սպասում առաջին օրվան՝ մտածելով, թե ինչպիսի դաս պետք է ստացվի ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ՄԵԹՈՂԻԿԱ առարկայից այս դժոխակ օրերից հետո:  
Յուրախություն բոլորի՝ 8:50-ին համալսարանի ճեմարանի լիքն էր ուսանողներով...  
Դասն սկսվեց...  
Դասն սկսվեց հայոց աշխարհի բազում նահատակների բացակայությամբ... ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ ՄԵՐ ԶԵՐՈՍՆԵՐԻՆ...  
Դասն սկսվեց համալսարանի պրոռեկտոր, բոլորիս շատ սիրելի էլեոնորա Արմենակի Յայրապետյանի բացակայությամբ... ԱՍՏՎԱԾ հոգին լուսավորի:  
Յամենայն դեպս, դասն սկսվեց: Դաս, երբ ուսանողների հայացքները ողողված էին ցասումով ու վրեժխնդրությամբ, անորոշությամբ ու անհանգստությամբ: Նրանց աչքերում փայլում էին տխրության, տագնապի, կարոտի, խուճապի կայծեր: Իսկ երբ փորձում էին ժպտալ, ժպիտների տակ քողարկված էին հրետակոծության և ռմբակոծության ձայների թողած հետքերը: Շատ դժվար է խուսափել բացասական տեսակետի ընդունումից, երբ բոլորս ուղղակի շրջապատված ենք դրանով:  
Ամենափոքր երեխան անգամ ընկալում է իրավիճակը...  
Միշտ փոխգործուն մեթոդներով իրականացվող մասնագիտական իմ դասը պետք է վերածելի ապրումների, մտորումների, կարծիքների կիսման ու լավատեսության մարմնավորման դասի:  
Յուրաքանչյուրի խոսքի հետ ապրումակցում էինք բոլորս: Անչափ հուզիչ էր տեսարանը. լավատեսության ոչ մի նշույլ...  
Մի աքսիոմատիկ ճշմարտություն. բոլորը մեծ երախտագիտությամբ էին արտահայտվում Յայրաստանում իրենց հյուրընկալության մասին:  
Իմ շատ սիրելի ուսանողներին ես փորձեցի մի քիչ քաջալերել և ոգևորել...

Ներկայացրի որոշակի դրույթներ՝ վերլուծելով և դրանք ներկայացնելով իրավիճակի համատեքստում...  
1. Խաղաղությունը ժպիտից է սկսվում: Խաղաղության գաղափարն աշխարհի բոլոր ազգերի սեփականությունն է: Որպես բարձրագույն բարիք՝ նրանք խաղաղություն են պահանջում:  
2. Հրաժարվում ենք ընդունել այն տեսակետը, որ մարդկությունն այնքան սերտորեն է կապված պատերազմի անասող կենդանիների, որ խաղաղության պայծառ արշալույսը երբեք չի կարող իրականություն դառնալ: Հավատում ենք, որ անգլեն ճշմարտությունն ու սերն են որոշիչ դեր խաղալու:  
3. Սովորենք նկատել լավը:  
4. Եթե դու ընկնում ես լեռան վրայից, ինչո՞ւ չես փորձում թռչել, չէ՞ որ կորցնելու ոչինչ չունես:  
5. Փոքր մարմինը, որի ներսում կա ամուր ոգի և հավատ սեփական առաքելության հանդեպ, կարող է փոխել պատմության ընթացքը:  
6. Ամենալավ միջոցը ինքը քեզ գտնելու համար ուրիշներին օգտակար լինելն է:  
7. Եթե դուք ուզում եք փոփոխություն ապագայում, դուք պետք է դառնաք այդ փոփոխությունն այսօր:  
8. Դուք ոչնչի չեք հասնի, եթե չսկսեք որևէ նոր բան:  
9. Ամեն մեկի մոտ էլ կգա երջանկությունը: Պարտադիր չէ, որ դա տեղի ունենա երեք-չաբթի, լույս չորեքշաբթի գիշերը, պարտադիր չէ, որ տեղի ունենա հունվարին կամ հունիսին, պարտադիր չէ, որ դա տեղի ունենա լավ եղանակին: Բայց այն անպայման կգա...  
10. Չկա երջանկության ոչ մի բանալի, դռները միշտ բաց են:  
11. Երջանկությունը կախված չէ այն բանից, թե ով ես դու և ինչ ունես: Այն կախված է միայն նրանից, թե ինչ ես դու մտածում:  
Փաստորեն երջանկությունը մարդու ներսում է...  
12. Պետք է հասկանալ, որ մարդիկ չեն կարող միանման մտածել, և որ մենք տեսնում ենք միևնույն ճշմարտության կտորները տար-

բեր անկյունների տակ:  
13. Ուժը վախի բացակայության մեջ է, այլ ոչ թե մարմնի մկանների:  
14. Հաղթահարենք ատելությունը սիրով, սուտը՝ ճշմարտությամբ, բռնությունը՝ համբերությամբ:  
15. Այժմ մեկ այլ՝ նոր սովորություն ձեռք բերելու ժամանակն է. սովորություն՝ միշտ բավարարված լինել ցանկացած իրավիճակով կամ իրադարձությամբ:  
Ես գիտեմ որոշ մարդկանց, որոնք սիրում են պարզապես ոսկի փնտրել: Չվարձալին այն է, որ նրանց ոսկու կաթսաները հիմնականում լցվում են միայն գետաքարերով: Սակայն դա նրանց այնքան էլ չի անհանգստացնում, և գիտե՞ք ինչու: Նրանց ուշադրությունը դրա վրա չի սեռնված: Նրանք այնքան են տարված շողացող քարի փնտրտուքով, որ անգամ չեն նկատում անպետք ավազակույտերը: Նրանց ուշադրությունը կենտրոնացած է այդ մանր և չնչին ոսկու կտորների վրա, և նրանց գիտակցությունը պարզապես զտում է մնացած ամեն ինչ:  
Իսկ ինչպիսի՞ն է նրանց արծազանքը, երբ վերջապես հայտնաբերում են ոսկու այդ փոքրիկ կտորը: Նրանք երբեք չեն ասում, թե պետք է ավելի մեծ եռանդով աշխատեն այդ ոսկին գտնելու համար: Փոխարենը իրոք ոգևորվում են և ավելի են կենտրոնանում, իսկ նրանց շնորհապարտության ու երախտագիտության զգացումն ավելի է մեծանում:  
Իսկ դուք, սիրելի՛ ուսանողներ, կկարողանայի՞ք այդպիսի մոտեցում դրսևորել ձեր առօրյա կյանքում:  
Վերջում ներկայացրի էնթոնի Հոփկինսի նամակը:  
«Դիմում են հուսահատ երիտասարդներին:  
Հավատացե՛ք ինձ: Ես կարդացել եմ մի շամանի մասին: Երաշտ էր. անասունները, մարդիկ մահանում էին: Եվ շամանը ասաց.  
- Փոս փորեք: Փորեք դրանք անձրևի համար:  
- Բայց անձրև չկա:  
- Փորեք փոսերը, և անձրևները կգան:

Անհավատները կասեն, որ դա անհեթեթություն է: Լավ, հավատացե՛ք նրան, ինչին ուզում եք: Սա ռացիոնալ մտածողություն է: Բայց ես չեմ կարծում, թե ներկայումս գործում է ռացիոնալ մտածողությունը: Դուք պետք է ունենաք իռացիոնալ մտածողություն, ենթագիտակցություն:  
Երբ փոքր էի, երազում էի դառնալ այնպիսին, ինչպիսին հիմա եմ: Գուցե ես պայծառատեսության շնորհ ունեի, չգիտեմ: Ես մեծ հույսեր չունեի, որ երազանքս կիրականանա, բայց այն պատահեց ինձ հետ: Եվ հիմա ես հավատում եմ, որ մենք կարող ենք խտացնել ժամանակը, ձգել այն դեպի մեզ:  
Ապագայի մասին այդ երազանքները. «Օ՛, ես ինչ-որ բան կանեմ հաջորդ տարի»:  
Այն գոյություն չունի, վաղը գոյություն չունի, հաջորդ ժամը գոյություն չունի: Դա ուղղակի հնարավորություն է: Բայց մենք կարող ենք ժամանակը տեղափոխել դեպի ներկա, դեպի հիմա՝ ուղիղ արևային համազույց, մեր հոգու մեջ:  
Ինչ էլ որ մտածեք անել, հավատացե՛ք դրան, հավատացե՛ք և նորից հավատացե՛ք: Եթե չեք հավատում, խաղացե՛ք, իբր հավատում եք: Գործե՛ք այնպես, կարծես հավատում եք: Յե՛նց սա է ուժը: Սա բացարձակ ուժ է:  
Իսկ հետո դա կլինի: Վստահե՛ք ինձ: Գործել է իմ կյանքում՝ կործի նաև ձեր կյանքում: Երբեք մի՛ հանձնվե՛ք: Հավատացե՛ք, հավատացե՛ք, հավատացե՛ք: Ազնուտիկ եք, աթեիստ, ով էլ որ լինեք, կապ չունի:  
ՀԱՎԱՍՏՅԵՔ, ՀԱՎԱՍՏՅԵՔ, ՀԱՎԱՍՏՅԵՔ:  
Մեզ նաև պետք է կամք՝ գործելու և խուսափելու այն աղբյուրներից, որոնք մեզ վրա բացասական ազդեցություն են թողնում»:  
Նշյալ դրույթների ճիշտ վերլուծության արդյունքում ուսանողներս հիացական ժպիտներով արտահայտվեցին. «Ինչքա՞ն էինք կարոտել այս հանդիպմանը...»:  
Դասս իմ կարծիքով հաջողված էր, քանի որ ուսանողներիս աչքերում ուրախության կայծեր տեսա:

Անա ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

### ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԷԶԵՐ

«Լուսարար»-ի հեթոթական համարը պատրաստ էր տպագրության, երբ սկսվեց պատերազմը: Այսօր վերսկսելով թերթի հրատարակությունը՝ նպատակահարմար գտանք նրա էջերում զետեղել նաև չիրատարակված համարի որոշ էջեր՝ պատմությանը պահ տալով մեր ոչ վաղ անցյալի լավագույն հիշողությունները՝ ապագայում դրանց հանդիպելու ակնկալով:

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ, ՈՐ ՏՈՆ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Շախմատը ձևով խաղ է, բովանդակությամբ՝ արվեստ, տիրապետելու դժվարությամբ՝ գիտություն»:

Տիգրան ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԵՎ ԶԵՆՈՎԱՐ, ԵՎ ԿԵՆՂԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՐԲ

Սեպտեմբերի 9-11-ը Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցում անցկացվեցին «Շախմատ» առարկայի ուսուցիչների ամենամյա վերապատրաստման դասընթացներ: ԱՐ ԿԳՄՆ շախմատի տեսուչ Բեյբուդ Մելքունյանի տեղեկատվությամբ, համավարակով պայմանավորված՝ օգոստոսի 24-27-ը անցկացվել են հեռավար դասընթացներ, որոնց մասնակցել է 91 ուսուցիչ: Տեխնիկական խնդիրների պատճառով Քաշաթաղի, Շահունյանի, Գաղբուրի շրջանների ոչ բոլոր դպրոցների ուսուցիչներն են կարողացել մասնակցել հեռավար վերապատրաստումներին: Եվ

թյունները նաև դասընթացներից հետո՝ էլեկտրոնային կապով:

### ԿԱՐԾԻՔՆԵՐ, ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերապատրաստման դասընթացների վերաբերյալ իրենց տպավորությունները կիսեցին մի խումբ մասնակիցներ:

**Սպարտակ ՆԱԶԱՐՅԱՆ, Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի միջնակարգ դպրոց:**

- Որպես շախմատի սկսնակ ուսուցիչ՝ դասընթացավարների նշած բոլոր քայլերն ինձ համար նորություն էին: Այնպես էլ, որ շախմատ խաղալ չգիտեմ, խաղում եմ 8 տարեկանից: Ճիշտ է, պրոֆեսիոնալ չեմ, բայց մասնակցել եմ մրցումների և հաղթել: Ի՞նչ տվեց ինձ այս եռօրյան: Նախ՝ ծանոթություն, ջերմություն, նոր հնարների կիրառում, քանի որ դրանք այստեղ ոչ թե սիրողական, այլ պրոֆեսիոնալ ձևով մատուցվեցին: Ծանոթ էի մարտավարության մի շարք հասկացությունների, իմացա, հետո կամրապնդեմ: Զաջող տարի այսքանը լրիվ սովորած՝ որպես արդեն լավ աշակերտ կներկայանամ վերապատրաստումներին:



տեգորիա, որի հետ շփված չլինեմ, բոլորից մի բան եմ սովորել: Շախմատն ինձ հնարավորություն է տալիս ճիշտ քայլ անել, մտածել՝ նոր քայլ անել: Քայլ անելուց հետո մտածելը «գնացքը գնալուց հետո»-ի պես մի բան է: Միևնույն ժամանակ պիտի մտածես, թե դիմացինդ ինչ կարող է նախածնել: Երկու կարմիր դիպլոմ ունեմ, բայց այս օրերին ինչ սովորեցի, նոր բաներ էին և՛ գիտամանկավարժական, և՛ շախմատի, և՛ մարդկային համեստության տեսանկյունից:

Վերապատրաստումները կազմակերպող և իրականացնող մանկավարժների մեջ, ի դեմս պարոն Միսակյանի, Բեջանյանի, Մելքունյանի, մենք տեսանք այն մարդկային ու հոգատար վերաբերմունքը, որ պարտավորեցնում են մեզ, որ մենք էլ մեր աշակերտների հետ լինենք նույնը: Նրանց պես մենք էլ ենք ուզում, որ մեր աշակերտները մեզ գերազանցեն, որ պրոգրեսիս լինի: Ամբողջ աշխարհում կրթությունը կարևոր է, բայց հայ ժողովրդի համար՝ առավել ևս: Ինչո՞ւ: Որովհետև ուրիշների նավթին, գազին մենք փոխարինում ենք մեր ինտելեկտով, այն ինտելեկտով, որը հնարավորություն է տալիս ուրիշի նավթը, գազը օգտագործել ի շահ Գայոց աշխարհի բարօրության: Մեր շնորհակալությունը դասընթացավարներին: Նյութի ծավալը մեծ է, կիսնդրեմք կազմակերպիչներին հետազայում դա նկատի առնել և գոնե մեկ օր ավել տրամադրել:

**Վարյա ԱՎԱՆԵՍՅԱՆ, Աղավնոյի դպրոցի տնօրեն:**

- Առաջին տարվանից, երբ «Շախմատ»-ը մտել է դպրոց, սկսել եմ դասավանդել: Դա Վանքի միջնակարգ դպրոցում էր: Բայց շախմատ սկսել եմ խաղալ 1-ին դասարանից: Իմ հայրն է ուսուցանել, մտածել է, որ դա շատ կարևոր է: Բարձր դասարաններում սկսեցի մրցումներում մասնակցել, հետո մարզային մրցումներում որպես ուսուցիչ էի մասնակցում: Մեր թիմը միշտ առաջնային տեղ էր գրավում: Տնօրենի իմ պաշտոնի հետ դժվար էի համատեղում: Ու այնպես էի անում, որ չորրորդ դասարանում «Շախմատ»-ը վերջին ժամը լինի, որ երեխաների հետ խաղան: Քաշաթաղում դպրոցի տնօրեն աշխատելու ժամանակ երեք տարի չեմ դասավանդել: Բայց մոռացի ահա սկսել եմ: Մի բանի անգամ մասնակցել եմ վերապատրաստման դասընթացների, ամեն անգամ երեք տարվա դասավանդման իրավունք եմ ստացել: Եվ ամեն վերապատրաստվելուց հետո նորովի եմ մտնում դասարան:



դրանց համար (48 հոգի), կազմակերպվել են կենդանի շախմատ դասընթացներ: Եվ հեռավար, և՛ կենդանի շախմատ դասընթացներն անցկացվել են Գայաստանի շախմատի ակադեմիայի մասնագետների կողմից: Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ էլ մասնագիտական թեմաներով վերապատրաստումն անցկացրեց Շախմատի ակադեմիայի մեթոդիստ-մանկավարժ Սամվել Միսակյանը, որն առարկան դպրոց մտնելուց ի վեր՝ 2011 թվականից օգնում է Արցախի շախմատի ուսուցիչներին:

նի: **Նվեր ԳԱԼՍՅԱՆ, Մոշաթաղի միջնակարգ դպրոց:**

- Ես էլ մանկուց խաղացել եմ շախմատ, հիմա էլ զբաղվում եմ, chess.com կայքում գրանցված եմ, սիրում եմ խաղալ տարբեր մրցակիցների հետ: Շախմատ խաղալով ես հանգստանում եմ. որպեսզի գործից մի քիչ թեթևանամ, շախմատ եմ խաղում: Երկրորդ տարին է, որ սկսել եմ «Շախմատ» դասավանդել: Այն, ինչի մասին խոսվեց դասընթացներում, գիտեմ: Բայց ինչպես «եռանկյունի» ֆիլմում Ջիգարիանյանն է ջութակ նվագող երեխայի մասին ասում. «Ան գիտությամբ կչալե», մենք էլ շախմատ խաղում էինք, բայց ինքնուս էինք, խաղում էին՝ ինչպես կարողանում էինք: Սակայն երբ գիտությամբ ես անում ու պատրաստ ես փոքր երեխաներին գիտությամբ մատուցել, մեծությունը դրանում է, գրագիտությունը ամեն տեղ մեծ դեր ունի:

**Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ, ուսուցիչ թավուր տեղի մրցույթին պատրաստվող:**

- Շախմատը հնարավորություն է տալիս իմանալ նախ մեր դաշտը, որտեղ ունենք գործելու հնարավորություն. այսինքն, եթե տրված է 64 վանդակ, մենք չպետք է երագենք 65 վանդակի մասին: Եվ երկրորդ՝ կարևոր է իմանալ, որ եթե կա 64 վանդակ, մենք երբեք չպետք է սահմանափակվենք, ասենք, 56-ով: Դա նշանակում է, որ մեր բոլոր հնարավորությունները պետք է օգտագործենք: Սա մեզ առհասարակ պետք կգա կյանքում: Չկա մարդկային մի կա-



\*\*\*  
Դասընթացների մասնակիցների մեջ կային նախկին գինվորականներ: Նրանցից էր Վանքի դպրոցի տնօրեն **Արամայիս Բալայանը**՝ պահեստագործի փոխգնդապետ: 1990-ից մինչև 2015 թվականը եղել է բանակում:

Ծառայել է մարտական հերթապահություն կրող զորամասում: Նրա օգնությամբ փորձեցինք համեմատություն անցկացնել ռազմի դաշտի և շախմատի միջև:

- Երկու դեպքում էլ գրեթե նույն մարտավարությունն է, նույն գործը, նույն պաշտպանությունը: Տղաները պետք է լավ շախմատ խաղալ իմանան:

- **Ուզում եք ասել լավ շախմատ խաղացողը վաղը լավ դիրքապահ է լինելու:**

- Առաջին հերթին՝ լավ մարդ և լավ գինվոր: Ձինվոր, որ կարող է և՛ մարտը վարել, և՛ կառավարել:

Հիմա մենք խմբային ձևով խնդիր ենք լուծում: Բանակում էլ ամեն դիրքում կա ջոկ, որում ընդգրկված են 8-10 հոգի: Խնդիրը կատարում են հրամանատարի հրամանների ուղղորդված կանոնակարգով: Նույն բանն էլ այստեղ՝ դասընթացներին ենք կատարում:

- **Շախմատը պե՞տք է դպրոցում:**

- Շախմատի իմացությունը ոչ մեկին չի խանգարում, ավելին՝ օգնում է ինքնակազմակերպվել, ճիշտ մտածել, կարողանալ ճիշտ գնահատել ինչպես սեփական, այնպես էլ մրցակցի (հակառակորդի) դիրքն ու հնարավորությունները:

### ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑՉԻ ԳԵՐԻՆՆԴԻՐ


Սամվել Միսակյանը, որ «Շախմատ»-ի դասագրքի հեղինակն է, պարզաբանեց փոփոխությունները. դրանք հիմնականում կատարվել են 2-րդ դասարանի դասագրքում. «Դասագիրքը թեթևացրել ենք: Կրտսեր տարիքի երեխային ավելի ենք մոտեցրել, որ հետաքրքրված լինի շախմատով: Գործնական աշխատանքների, խաղային ժամերի քանակն ենք ավելացրել, դասագիրքն ավելի մատչելի է դարձել լեզվական առումով, ավելի ենք պարզեցրել: Կարծում եմ՝ դրական արձագանքը կստանանք մեկ տարի անց: Մեկ ուրիշ փոփոխություն էլ ենք կատարել. 2-րդ դասարանի վերջի մարտավարական թեմաները՝ «Կապ», «Կապի կիրառություններ», «Բաց հարձակում», «Բաց շախ», տեղափոխել ենք 3-րդ դասարան: Այս տարի կլինի կրկնողություն, քանի որ անցել են 2-րդ դասարանում: Բայց մյուս տարվանից որպես նոր թեմաներ կանցնեն 3-րդ դասարանում»:

Խոսելով շախմատի կարևորության մասին՝ Ս. Միսակյանն ասաց, որ այն ռազմավարական արվեստ է, նրա միջոցով երեխաներին սովորեցնում են ռազմական գործի որոշակի նրբություններ: Առարկայի հնտություններն ու հնարներն ուսուցիչներին սովորեցնող վարպետ մանկավարժը, որը շախմատային հազարավոր դիրքերի անգիր իմացությամբ իրացրել է մեր ուսուցիչներին, ասաց. «Ես շատ բան եմ սովորել Արցախի Գայրաթաթյանի ուսուցիչներից, ամեն անգամ վերցնում, ավելացնում եմ իմ գիտելիքները»:



ԶՏՊԱԳՐԿԱՅ

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԸ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԿՐԱԳՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԿՈՒՇԵՐՈՒՄ



Սամվել Միսակյանը նպատակներից է խոսում. - Յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է, որ իր սանը գերազանցի իրեն: Եթե քո իմացությունը դու չկարողանաս փոխանցել այնպես, որ քո սանը գերազանցի քեզ, ուրեմն՝ որպես ուսուցիչ չես կայացել: Հիմա իմ գերնպատակն այն է որպես «Շախմատի» վերապատրաստող, որ ուսուցիչը, որն աշխատել է ինձ հետ, կարողանա իմ ձեռագիրը վերցնել և ավելի լավացնել, կատարելագործել, փորձել տեղայնացնել, որովհետև ես, հնարավոր է, իդեալական պայմաններ են առաջարկում: Ասում են մի բան, որը կարող է քո դպրոցում դժվար կիրառվի կամ որոշակի եթե-ներից հետո կիրառվի, բայց դու այդ դպրոցի ուսուցիչն ես, դու վերցնում ես այն, ինչ քեզ պետք է: Յուրաքանչյուրս երազում ենք լինել իդեալական, անթերի, բայց դա գրեթե բացառվում է: Ես ձեզանից են սովորում, դուք՝ ինձանից, մեկս մյուսից, մեր փորձը փոխանակում ենք, որպեսզի մեր գերխնդիրը կատարենք: Իսկ մեր գերխնդիրը մեր երեխաներն են, որ ճիշտ դաստիարակվեն, որ վաղվա մեր քաղաքացին լինի հայրենասեր, յուրաքանչյուր քայլ կատարելուց առաջ մտածող: Եթե մենք շախմատի միջոցով կարողանում ենք երեխաների գիտակցությանը հասցնել, որ ոչ թե ֆիզիկայի բանաձև կամ մաթեմատիկայի կրճատ բազմապատկման բանաձև անգիր հիշի, այլ կյանքում ինչ քայլ կատարում է, մտածելով անի, միաժամանակ զգա, թե դիմացինը ինչ է մտածում, ուրեմն հասել ենք մեր նպատակին: Շախմատը այդ հրաշքն ունի: Եթե այսօր Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը, աշխարհում լինելով եզակի պետություններ, որ կարողանում են շախմատը պահել կրթական համակարգում որպես պարտադիր առարկա, ուրեմն շատ բաների կարող ենք հասնել: Հավատա-



1903-1904թթ. Հրաչյա Աճառյանը, որպես Շուշիի թեմական դպրոցի հայերենի ուսուցիչ, ապրել է Արցախում: «Կյանքիս հուշերից» գրքում նա համառոտ պատմում է այդ ժամանակաշրջանի մասին, որից կարելի է կարծիք կազմել վերոնշյալ դպրոցի և ընդհանրապես, Շուշիի մասին: Աճառյանը եղել է այստեղ հայկական Շուշիի ծաղման շրջանում: Քաղաքը Կովկասի մակարդակով բարեկեցիկ էր, կրթությունն ու մշակույթը նույնպես բավականին բարվոք վիճակում էին («Ունեին 4 եկեղեցի, մի առաջնորդարան, մի թատրոն, մի գրադարան, մի տպարան և մի թեմական դպրանոց, որ իմ ժամանակ 600 աշակերտ ուներ: Ըստ կարելիվոյն ընտիր ուսուցչական մարմին ուներ»)[1]: Անձամբ իր համար էջմիածնից Շուշի տեղափոխվելը Աճառյանը դրական է գնահատում. «Էջմիածնում ես մի երկրորդական ուսուցիչ էի, անարժեք և արհամարհված. մինչդեռ Շուշիում ես պատվավոր ուսուցիչ էի և այն էլ հայոց լեզվի, որ այն ժամանակ համարվում էր անենահարգի առարկան»: Բացի այն, որ Շուշի տեղափոխվելը զգալի բարելավել է Աճառյանի ֆինանսական կացությունը, նա իրեն այստեղ հարմարավետ էր զգում նաև այլ պատճառներով. «Մենք բոլորս սիրեցինք Շուշին: Համեղ ջուրը, փափուկ կլիման, շրջակա անտառները, զբոսավայրերը, հիանալի տեսարանը, բնակիչների զվարթ, անշահախնդիր բնավորությունը հաճելի դարձրին կյանքը: ...Այն զգվելի ատելությունը, որ տեսնում էինք Էջմիածնում տաճկահայերի դեմ, բացարձակապես գոյություն չուներ Շուշիում և թերևս հակառակ էլ էր: Տաճկահայերին սիրում էին իբրև ավելի ուսումնասեր և ազգասեր հայերի»:

Եվրոպական երկրներում, ինչպես, օրինակ՝ Գերմանիայում սովորած մաթեմատիկայի ուսուցիչ զանձակեցի Հարություն Մելիքյանը, պատմության ուսուցիչ այլքսանդրապուլցի Գարեգին Խաժակը: Դպրոցի ուսուցիչների շրջանում ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի իմացությունը տարածված էր այն աստիճան, որ սովորական բնույթ էր կրում: Ցավոք, Աճառյանը շատ չի ծավալվում կրթության չափանիշների, դասավանդվող առարկաների, աշակերտների գիտելիքների շուրջ:

Դասարանների աշակերտները տեղափոխվում են Երևան, Ազուլիս, Նոր Նախիջևան՝ շարունակելու և ավարտելու համար: Որպեսզի ռուսները դպրոցի միջոցները չառգրավեն, դեկավարությունը որոշում է բոլոր ուսուցիչների տարվա աշխատավարձը միանգամից վճարել, իսկ երբ այն փակվում է, վերջիններս շարունակում են դասավանդել ընդհատակյա պայմաններում՝ դասերը կազմակերպելով տարբեր մարդկանց տներում. «Ռուսաց դպրոցների բարձրագույն դասարանի աշակերտները խմբակներ էին կազմակերպում և սովորում էին հայերեն լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն թեմականի ուսուցիչների ղեկավարությամբ: Այնպես էին կազմակերպած, որ իբր թե այդ օրը տնեցիք տոնախմբություն ունեին: Թամն ու դափը պատրաստ դրված էին, այս բոլորը արված էր զգուշության համար, որպեսզի, եթե ոստիկանությունը ներս մտներ, դասախոսությունը վերածվեր նվագահանդեսի»: Այս ձևով հաջողությամբ ավարտելով դասընթացը՝ Հրաչյա Աճառյանը տեղափոխվում է ուսուցչության Թավրիզում:



Հ.Աճառյանի շուշեցի կինը

Աճառյանի գործունեությունը Արցախում, սակայն, տևեց ընդամենը երկու տարի, չնայած նա ամուսնացել էր տեղացի աղջկա հետ՝ խոստանալով վերջինիս հորը երբեք չլքել Շուշին: Պատճառը ցարական կառավարության՝ եկեղեցական գույքը բռնագրավելու հայտնի որոշումն էր: Ամենուր ուժեղ դիմադրություն է սկսվում, կաթողիկոսը, դպրոցների տեսուչները հրաժարվում են ստորագրել գույ-

քը հանձնելու հրամանը, զանգվածային ցույցեր են տեղի ունենում տարբեր քաղաքներում: Դրան ի պատասխան՝ ռուսներն ավելի են խստացնում իրենց ռեպրեսիաները: Սկսվում են համատարած խուզարկություններ, ոմանց ձերբակալում են: Շուշիի թեմական դպրոցը ընդհանրապես որոշում են փակել, չնայած Երևանի ու Թիֆլիսի թեմականները շարունակում են գործել: Բարձր



չոր թախտափուշները հեշտությամբ վառվեցին, և ամբողջ քաղաքը հրո ճարակ դարձավ: Շուշվա կրթամանա առթիվ վրացական մի թերթ գրել էր. «Կովկասում մի աղամանդ կար. թուրքերը փշրեցին այդ աղամանդը»: [1]Այս և մյուս բոլոր մեջբերումները կատարված են ըստ Աճառյան Հ.Հ. «Կյանքիս հուշերից», «Միտք» հրատ., ԵՊՀ, Եր., 1967:



ցեք, պատմության էջերում կգրվի այդ մասին և կգրվի այն ուսուցիչների մասին, ովքեր առաջին իսկ օրերից են դասավանդել. գյուղապետը, զինվորականը մտել են դպրոց՝ շախմատ ուսուցանել: Մեծ մանկավարժներ Սուխոմլինսկին, Ամոնաշվիլին, Աղայանը և էլի շատերը գտել են, որ կրտսեր դպրոցում պետք է շախմատ դասավանդվի: Ոչ թե խմբակի ձևով, այլ որպես պարտադիր առարկա: Որովհետև տեսել են շախմատի ուժը: Եվ այսօր շատ երկրներ ձգտում են դրան հասնել, բայց դա այդքան էլ հեշտ բան չէ, դրան մենք հասել ենք մեծ ջանքերի գնով: Հիմա մեզանից պահանջվում է, որ ավելի զարգացնենք, ուզում ենք մեր գործը շատ ազնիվ կատարել, որ «Շախմատ» առարկան ոչ թե վերջինը, այլ առաջիններից մեկը լինի: Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներով «Շախմատ»-ը իր վարկանիշով երրորդն է «Մայրենի»-ից ու «Մաթեմատիկա»-ից հետո: Շախմատ իմացող երեխան, համոզված եղեք, նորմալ քաղաքացի, դաստիարակված մարդ կդառնա մեր երկրի համար:

ԸՆԴՄԻՋՈՒՄԸ՝ ԻՐԻՎ ԴԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Չենք կարող չանդրադառնալ նաև դասընթացների կազմակերպվածության մեկ այլ կողմին՝ ընդմիջումներին, որոնք ուսուցիչները գերադասում էին անցկացնել միասին: Քարեզահի ուսուցչուհի Եվգենյա Ավետիսյանն այդ գործի հմուտ կազմակերպիչ է: Միասին ճաշակած հացը, անկասկած, ոչ միայն անմոռաց դարձրեց եռօրյան, այլև մտերմացրեց նրանց, որի շարունակությունն, անշուշտ, կարտահայտվի տարբեր ձևերով՝ հեռահաղորդակցական կապի միջոցներով, կենդանի փոխայցելություններով, որոնց ընթացքում և՛ միմյանց փորձ կհաղորդեն, և՛ պարզապես մարդկային ջերմ հարաբերությունները կամրապնդվեն:

Իսկ Արթուր Գրիգորյանի հունորը, Վարյա Ավանեսյանի՝ բանաստեղծներից պատեհ տողեր մեջբերելը ուրախ ու գեղարվեստական պահեր պարզեցին:

Տիկին Վարյայի շուրթերից հնչած Պարույր Սևակի տողերը յուրաքանչյուրը լռելյայն ընկալեց որպես իրեն հղված կոչ-պատգամ.

Լինել ոչ թե հարկիավաքը,  
Այլ զավակը  
Դժվար դարի,  
Ինչպես նրան՝ և ինքըս ինձ  
Հավե՛տ մնալ հավատարիմ. -  
Թեկուզ կրել և մահացու ցավը դարի,  
Թեկուզ նույնիսկ կյանք արժենա դավը դարի,  
Մեռնելիս էլ ոչ թե տանել,  
Այլ կտակե՛լ լավը դարի:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԷՋԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՃՈՒԿԱՆ ՈՒԺՆ Ե ԵՐԿՐԻ



Երբեմն հասարակության շրջանում երիտասարդության մասին թերահավատության կամ անվստահության կարծիքներ են հնչում: Դա հասկանալի է, քանի որ այդ ամենը կապում են նրանց անփորձության, ժամանակի որոշակի փոփոխությունների հետ: Երբեմն էլ դժգոհում են՝ մոռանալով, որ հենց ավագ սերունդը պիտի ուղեմիջ դառնա երիտասարդների համար, կարողանա գնահատել, խրախուսել նրանց առաջընթացը, խորհրդատու դառնալ դժվարին ու անելանելի իրավիճակներում՝ ժամանակին կանխելով վրիպումները: Սակայն եթե համեմատելու լինենք ներկայիս երիտասարդությանը նախորդ սերունդների հետ, սպա պիտի խոստովանենք, որ նախորդներն ավելի պասիվ էին, ազատ ու համարձակ չէին իրենց գործողություններում, մույնիսկ ինչ-որ տեղ էլ կրավորական էին: Ներկա երիտասարդությունը, ընդհակառակը, հզոր ուժ է բառիս խորքային իմաստով. նա նախաձեռնող է ու համարձակ, օժտված ազատ գործելու վճռականությամբ, նպատակասլաց ու հեռանկարային, գիտակից և կարողանում է շատ խիզախ քայլեր ձեռնարկել՝ միտված լուսաշող ապագային, ինչը մեր ժամանակներում իսպառ բացակայում էր: Այսօր կա երիտասարդության մի հզոր բանակ, որն իր նախաձեռնություններում ուղղակի անգերազանցելի է. այն ընդգրկում է հասարակական տարբեր կազմակերպություններ ու կուսակցություններ:

Նման երիտասարդների մասին միշտ պիտի բարձրաձայնել. նրանք բարձր գնահատանքի ու գովասանքի են արժանի, քանզի իրենց ձեռնարկներով փաստում են, որ ավելի մեծ հայրենասպաշտներ են ու հայրենասերներ, հայրենի բնաշխարհի պահպանությամբ ու անապակությամբ շահագրգիռ մի սերունդ՝ երկրի ճակատագրով նախանձախնդիր: Նրանց բոլոր նախաձեռնությունները հայրենի Արցախը շենացնելու, բարգավաճեցնելու, հարազատ հողին ամուր կառչելու, անձնուրացորեն նվիրվելու փայլուն օրինակներ են: Հենց այդպիսի երիտասարդներով պիտի Արցախը ներկայանա աշխարհին ու ճանաչելի դառնա, անվաճճ՝ բոլոր հորձիգների ու սոսիսների համար: Նրանք են փայլ ու երանգ հաղորդում մեր հայրենիքին, նրանցով է կանգուն ու պաշտպանված մեր երկիրը: Սատարենք այդ երիտասարդների նախաձեռնություններին ու ձեռնարկներին, որ նպատակաուղղված են մեր երկրի լուսավառ ապագային: Հնարավորություն տանք լավագույնս դրսևորվելու ու կատարելագործվելու, քաջալերենք նրանց իրենց ծրագրերի իրականացման ճանապարհին:

Նման երիտասարդներից մեկի մասին են փորձել ներկայացնել սույն հոդվածում՝ ճանաչելի դարձնելու նրա նպատակները, երազանքները, մտահոգություններն ու անվարան գործելակերպը:

Դավիթ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ. ԱրՊՀ ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանող, Հարվարդի համալսարանի ծրագրավորման հիմնումը և մարքեթինգ բաժնի վեցամսյա դասընթացի (հեռավար) մասնակից-ուսանող (արդեն 5-րդ ամիսն է), Արցախի SS կենտրոնի ավիանոդելավորման դասընթացավար, Արցախում գործող մարքեթինգային թիմերից մեկի հիմնադիր-ղեկավար:

Հայրենիքս և ես՝ մենք լծորդված ենք իրար, ինչպես հողի և մարմին, ինչպես նպատակ և միջոց:

Նա գերազույն նպատակ է, ես՝ միջոց:

Գարեգին Նժդեհ

**- Հեռահար ի՞նչ նպատակներ մղեցին Ձեզ՝ բռնելու այդ ոչ դյուրին ճանապարհը:**

- Դա ոչ թե նպատակ, այլ խնդիր է եղել ինձ համար: Բոլորը գիտեք, որ Արցախի երիտասարդությունը շրջափակման պատճառով զարգացման շատ քիչ հնարավորություններ ունի և որոշ չափով մատնված է անգործության: Առաջնահերթ խնդիր է եղել երիտասարդությանը զբաղեցնել ու ակտիվացնել: Աշխատանքն ու ուսումը համատեղելով՝ փորձում են նպատակային կերպով ուղղորդել երիտասարդությանը:

**- Ի՞նչ գործունեություն եք ծավալում ներկայումս. արդեն հայտնի են մի շարք նախաձեռնություններ:**

- Նախ ընդգծեն, որ ամեն ինչ արվում է հասարակական հիմունքներով: Օգտագործում են փոքր եղբորս՝ Տիգրանի Tigran-blog էջը: Նա արդեն հետևորդների մի հսկայական բանակ ունի հայրենիքում և արտերկրում: Ֆեյսբուքյան տիրույթում հայտարարություններ են տրվում երիտասարդներին որևէ միջոցառման մեջ ընդգրկելու համար: Առաջին նախաձեռնությունն եղել է Ասկերանի բերդի շրջակայքի մաքրումը պլաստիկ նյութերից, հետո՝ Նանապատի Մեծ Նանի (սրբավայր) տարածքից աղբահավաքությունը: Հայտարարությամբ մոտ 80 երիտասարդ էր գրանցվել, չնայած այդ օրն այդքանը չէր միացել մեզ: Պլանավորել ենք նաև մի ուրիշ սրբավայրի՝ Սայունց օջախի մաքրման աշխատանքները: Փորձում են երիտասարդության շրջանում բարձր մշակույթի ձևավորել բնության ու հասարակության հանդեպ:

**- Որո՞նք են փոքր բիզնեսի Ձեր նպատակը և ուղիները, ծավալելու միտում ունե՞ք:**

- Նպատակս է պահպանել ավանդական ու ազգայինը: Մանրամասնեմ. հորս տատը՝ Սաթին, միայն խոստաբույսերով էր թեյ խմում, առույզ ու առողջ կին էր, երկարակյաց: Սա է ավանդականի իմաստը: «Նախշուն թեյ»-ի նախշուն անունն էլ (գունավոր) խորհրդանշում է Արցախի գունագեղ կոլորիտը: Սա էլ ազգայինի պահպանման միտումն է: Բիզնեսը ծավալելու ձգտում կա: «Նախշուն»-ից բացի մոտ 10 թեյ արտադրող էլ կա, բայց «Նախշուն»-ը առաջատարն է և գերազանցում է հաճախորդների և բրենդի տեսանկյունից:

**- Ուլթե՞ր են աջակցում Ձեզ բոլոր ձեռնարկներում:**

- Ինձ օգնում են ընտանիքիս բոլոր ան-

դամները, ընկերական շրջապատը (տոնփերի ձեռքբերման գործում), գովազդը երեք եղբայրներիս՝ Տիգրան, Աշոտ, Դավիթի ուժերով:

**- Ինչպե՞ս եք իրացնում Ձեր արտադրանքը: Ինչո՞վ է այդ գործին նպաստում փոքրիկ Տիգրանը:**

- Նախ՝ Տիգրանի մասին: Բոլորիս նպատակն էր Արցախում բլոգինգի զարգացումը խթանել, կարևորել նրա ուսուցողական և ճանաչողական նշանակությունը: Ընտրեցինք Տիգրանին՝ ստեղծելով Tigran-blog էջը: Մեր փոքրիկն արդեն մեծ նվաճումներ ունի և գնալով ավելի է կատարելագործվում: Գովազդի առումով մեծ է Tigran-blog-ի դերը: Մեր արտադրանքը վաճառվում է օնլայն եղանակով Ստեփանակերտի մի շարք վաճառակետերում: Որոշակի դանդաղեցումը պայմանավորված է համավարակի առկայությամբ: Լուսավոր հույսը երբեք չի լքում ինձ:

**- Ո՞րն է եղել Մեծ Նանում իրականացված նախաձեռնության առիթը, և ապագայում ի՞նչ նախաձեռնություններ ունեք:**

- Այս տարվա օգոստոսի 10-ին ընկերներով այցելել էինք այդ սուրբ վայրը թեյախմության նպատակով: Այն, ինչին ականատես դարձանք, ուղղակի սարսափելի էր: Տեսնելով սրբավայրի շրջակա տարածքի աղբը, որ կես մետրից էլ ավել հաստություն ուներ, մենք իսկույն որոշեցինք՝ այստեղ պետք է միշտ մաքուր լինի: Ֆեյսբուքով հայտարարություն տարածեցինք: Հետաքրքրվողների շրջանակը մեծացավ (մոտ 80 մարդ), և նախանշված օրը՝ օգոստոսի 29-ին, հավաքվեցինք շաբաթօրյակի: Եիշտ է, այդքան մարդ ներկա չէր, բայց հավաքվածներով իրականացրինք մաքրման աշխատանքները, որում մենք աջակիցներ ունեցանք շրջկենտրոնում: Համոզված եմ՝ դրանից հետո մարդիկ կգիտակցեն, որ բնությունը խրախուսելի վայր ընկալելուց գատ պիտի հոգ տանել նաև շրջապատի մաքրության մասին:

**- Մեծանո՞ւմ է, արդյոք, նման նախաձեռնություններ իրականացնող Ձեր թիմի շրջանակը, շատե՞րն են ցանկություն հայտնում կամ արձագանքում Ձեր կոչին:**

- Պիտի խոստովանեմ, որ բանավոր մասնակիցներն ավելի շատ են, քան բուն գործողություններ իրականացնողները: Սակայն չեն վիատվում, համոզված եմ, որ երիտասարդությունը ավելի կակտիվանա, որովհետև գնալով ավելի են շատանում հասարակական կազմակերպությունները, որոնք զբաղվում են նմանօրինակ նախաձեռնություններով:

**- Միմյանց չե՞ն խանգարում Ձեր գործունեության տարբեր ուղղությունները՝ ավիանոդելավորման դասընթացավար և մարքեթ-**



լոգ:

- Միանշանակ՝ ոչ, քանի որ յուրաքանչյուրն ունի հետաքրքրության իր շրջանակներն ու բովանդակությունը: Ամեն ինչ անում են սիրով ու համույթով:

**- Ո՞րն է այն գործը ուղը, որը Ձեզ կապում է Արցախի հող ու ջրին:**

- Հայրենասիրությունը, հայրենասպաշտությունը, սեփական արմատներին հավատարիմ մնալու հանգամանքը, կապվածությունը հարազատներին ու ընկերներին:

**- Ունեցե՞լ եք ծախողումներ, և ինչպե՞ս են ազդել դրանք Ձեզ վրա: Կարողացե՞լ եք հեշտ հաղթահարել:**

- Իհարկե ունեցել եմ, սակայն դրանք երբեք չեն ընկճել ինձ, ավելին, ուժ ու հավատ են պարգևել՝ հաղթահարելու: Ես կասեի, որ դրանք ավելի շուտ ինքնաճանաչման, ինքնաբացահայտման կարևոր դասեր էին ինձ համար:

**- Ձեր կարծիքով երիտասարդությունը ի՞նչ անելիքներ ունի Արցախի շենացման գործում:**

- Չափազանց մեծ, քանի որ նախ ինքը պիտի կրթվի, հետո կթի և ամենակարևորը՝ ճիշտ գործի: Նրանից շատ բան է կախված:

**- Գիտե՞մ, որ մտահոգ եք Արցախի՝ աշխարհին ճանաչելի դարձնելու հարցում, ի՞նչ քայլեր եք ձեռնարկում:**

- Ամենամեծ քայլը, թերևս, Tigran-blog-ի ստեղծումն էր, որով փորձում ենք աշխարհին տեղեկացնել այս հրաշք երկրի գրավիչ բնաշխարհի, տեսարժան վայրերի հարստության, մեր ազգային ավանդույթների ու սովորությունների մասին՝ գրավելով տարբեր ժողովուրդների ուշադրությունը: Այս գործում արդեն արձագանքներ կան: Հաջորդը «Նախշուն թեյ»-ի բրենդի ստեղծումն է, ինչը, ցավոք, առաջացրել է հարևան Ադրբեջանի խիստ դժգոհությունը: Տարբեր կայքերով կարծիքներ են հնչում, թե իբր իրենց հողի

առողջարար բույսերից անարատ թեյեր ենք պատրաստում, խմում, իսկ իրենք ներկայություն են օգտագործում: Կամ՝ Նախշուն-ը մեկնաբանում են «Նախիջևան» բառի հնչյունափոխության օրենքներով և այլն:

**- Երեք եղբայր եք՝ պատմական անուններով, երբեք էլ խոստումնալից ապագայով, պատահակա՞ն են այս անունները, թե՞ ի սկզբանե էր ծրագրված:**

- Ինչպես մայրս է վկայում, ինք Դավիթ Բեկի պատվին է, Աշոտինը՝ Աշոտ Երկաթի, Տիգրանինը՝ Տիգրան Մեծի: Անուններ, որ մեր պատմության մեջ ծանրակշիռ ավանդ ներդրած անհատներ են խորհրդանշում: Թող անհամեստ չհնչի, երեքս էլ արժանիորեն ենք կրում այս փառապանծ անունները:

**- Ի՞նչ կոչ կողիք Արցախի երիտասարդությանը:**

- Երբեք չվախենալ ռիսկերից, դժվարություններից, փորձություններից: Լինել նախաձեռնող, կազմակերպված, համախմբող ու միաբան, փորձել ինչ-որ ձևով նպաստել Արցախի շենացման ու ճանաչման գործընթացին: Իմ շրջապատում էլ կան երիտասարդներ, որ սկզբունքային են, չեն վախենում խիզախ ձեռնարկումներից, սակայն նրանք դեռ քիչ են, իսկ թերահավատները՝ ավելի շատ: Կյանքը նորանոր անակնկալներ է մատուցում, մենք էլ չպիտի երկնչենք դժվարություններից ու համարձակ քայլերից:

**- Ձեր եղբայր Աշոտը, որ այսօր ուսանում է Պորտուգալիայում, վերադառնալու պարտավորվածությամբ է զարգացնում ընտրած մասնագիտությունը և ի՞նչ հեռանկարներ ունի:**

- Ասեմ ավելին. նա ոչ միայն այդ երկրում է եղել: Ուսման հետ կապված տարբեր հանգամանքներով հնարավորություն է ունեցել լինել եվրոպական մի շարք երկրներում: Աշոտը տեսականորեն այնտեղ ներկայացրել է մեր ազգային ժենգալով հացը, սալորաչիլը և այլ սննդատեսակներ: Պորտուգալացիներն էկոլոգիապես մաքուր սննդի սիրահար են և, լսելով նրա դասախոսությունները, ցանկություն են հայտնել 70 հոգանոց զբոսաշրջիկների խմբով լինել Արցախում: Համոզված ասում եմ, որ ոչ հեռու ապագայում այդ խումբը կժամանի Արցախ, ինչն էլ կնպաստի զբոսաշրջության զարգացմանը մեր գողտրիկ աշխարհում: Եղբայրս մեծ պարտավորություններ ունի Արցախի ժողովրդի հանդեպ և կիրականացնի դրանք:

**- Համաձայն եք այն տեսակետին, որ երկրի ապագան պայմանավորված է նրանով, թե ինչպիսի երիտասարդություն է գործում այնտեղ:**

- Անշուշտ, դա այդպես է: Երիտասարդությունը հզոր ուժ է երկրի զարգացման գործում, հետևաբար, նրանից շատ բան է կախված: Մեր երիտասարդության շրջանում, մասնավոր մայրաքաղաքում, դեռևս նկատելի են հոռի դրսևորումներ, բայց դա, կարծում եմ, ժամանակի խնդիր է, որովհետև գնալով սովորանում է այն երիտասարդների բանակը, որ օրինապաշտ է ու բարեկիրթ, իրականացնում է խրախուսելի գործառնություններ: Կան նաև այնպիսի շնորհալիներ, որ այսօր հպարտորեն կարող են ներկայանալ աշխարհին ու իրենց գիտական խոսքն ասել գիտության ու տեխնոլոգիաների մեջ: Մեր թիմի բոլոր նախաձեռնությունները հետապնդում են միմիայն մեկ նպատակ՝ դառնալ օրինակելի շրջապատի համար, որովհետև դաստիարակված երիտասարդությունը միայն կարող է ազգանպաստ գործունեություն ծավալել: Շուտով նոր անակնկալներ ևս կլինեն:

Ահա այսպիսի երիտասարդներով է Արցախը բարգավաճելու և իր խոսքն ասելու: Հարթենք նրանց ճանապարհը և բարի մարդեք, քանզի այն անխախտ է ու ճշմարիտ:





ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Ես չեմ ուզում եւ չեմ կարող երկար ու բարակ գրել մեր երկրից, քեւ դու հարցնում ես: Կարճ ասեմ. մենք թե՛ դրսից եւ թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: Մենք եւս ասում, եւ սրա մեջն է ճշմարտությունը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու ավազակներ, մի մասը ապիկար թշվառականներ, եւ չերեւաց մի բազմություն, գոնե մի խմբակ, որ վերածնվող երկրի շունչը ու բարոյական կարողությունը հայրնաբերեր: Էսքան աղետների ու պարտությունների մեջ ո՛չ մի մեղավոր չերեւաց, ո՛չ որ ոչ պարասիասնի կանչվեց, ոչ պարասիասն փվեց: Եվ շարունակվում է. այժմ էլ նույն մարդիկը, նույն ճանապարհներով: Եվ ոչ մեկը գոնե անչնասպան չեղավ, որ ապացուցաներ, թե գոնե ամոք ու խղճմբասնք կա էս մարդկանց մեջ կամ էս ժողովրդի մեջ: Բայց ես ինչ եմ ասում -չկարողացան գոնե վշտանալ կամ վշտացած երեւալ:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1921

ԹԻՎՈՒՆՔՈՒՄ

«Թիկունքն էլ դիրք է, և պետք է ամուր պահել».

այս կարգախոսով էին Հայաստանում և Արցախում կամավորական աշխատանքներ կատարում քաղաքացիները: ԱՐ կրթության, գիտության և մշակույթի նախարարության աշխատակազմը նախարարի հետ միասին պատերազմի առաջին իսկ օրերից Ստեփանակերտում լծվել էր կամավորական աշխատանքի. կանայք կարի արտադրամասում զրահաբաճկոններ էին կարում զինվորների համար, հումանիտար աշխատանք կատարում՝ սննդամթերք տեսակավորում՝ դիրքեր, հոսպիտալ,



ա պ ա ս - տ ա ր ա ն - ն ե ր ու մ գ տ ն վ ո ղ մ ա ր դ - կանց ու - ղ ար կ ե լ ու հ ա մ ա ր : Տ ղ ա մ ար - դի կ ամ - բ ո ղ ժ ա - մ ա ն ա կ պ ա հ ե ս տ - ն եր ու մ հ ու մ ա նի տ ար օ գ ն ու թյ ու ն ն ե ն բ եռ ն ք ա փ ե լ , «Մ որ և մ ա ն կ ա ն հ ի վ ա ն - դ ա ն ո ց» - ի ի ր ե տ ա կ ո ճ ու թյ ու ն ի հ ի ե տ ո մ ա ք ը մ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն եր ղ կ ա տ ար է և ա յ լ ն :



«Լուսարար»-ը նույնպես միացել էր կամավորական աշխատանքներ կատարողներին. պաշտպանական ցանցեր էր հյուսում: Բոլորի նպատակը մեկն էր՝ իրենցից կախվածն անել հաղթանակի համար:



Կոմանդոսի հետ



1990Թ. ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

11 ՍԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին» Հայկական ԽՍՀ ԳԽ 1990թ. սեպտեմբերի 17-ի դիմումը, որտեղ ասված է, որ հայ ժողովրդի ընտրյալների կյանքը վտանգի է ենթարկված: Նրանց միակ պահանջը միանգամայն սահմանադրական է. վերականգնել ԼԴԻՄ-ում օրինական իշխանության մարմինները: Այս պահանջի մերժումը ոչնչով չի կարող արդարացվել և միայն կավելացնի ևս մի էջ երկրի արյունոտ պատմության մեջ, որի ողջ պատասխանատվությունը կընկնի անձամբ ԽՍՀՄ պրեզիդենտի վրա:

21.09.1990թ.: Ոտքի է ելել Հաղորդը՝ իմ հարազատ շրջանը: Երեկ առավոտյան ժամը 11-ին պատերազմի և աշխատանքի մի խումբ վետերաններ աշխատավորների հետ հավաքվել են կուսընթացի շենքի բակում և պահանջել, որ Բաքվից շրջկենտրոն ժամանած անօրեն կազմկոմիտեի նախագահ Մ. Չուրկովը անհապաղ հեռանա շրջկոմի շենքից ու ընդմիջտ հեռանա Հաղորդից, որովհետև նրա 2,5 ամսվա գործունեությունը ավելի է քայքայել շրջանի սոցիալ-տնտեսական կյանքը, սրել ազգամիջյան հարաբերությունները: Պարզվել է, որ Չուրկովը շենքում չէ: Արցախի ակտիվիստները դիմել են Մոսկվա հացադուլավորներին՝ դադարեցնել այն, քանի որ հացադուլի հետագա շարունակումը կվնասի նրանց առողջությանը:

23.09.1990թ.: Ի պաշտպանություն Մոսկվայում գտնվող հացադուլավորների, Ղարաբաղի մի խումբ կանայք նույնպես քաղաքական հացադուլ են հայտարարել և աշխարհի տարբեր ծայրերից հիացմունքի հեռագրեր ստացել:

25.09.1990թ.: Ուրախանում ենք այն փաստով, որ սեպտեմբերի 20-ին ստեղծվել է Հայաստանի ՆԳ հատուկ գործառնա (հրամանատար՝ Ս. Առաքելյան, տեղակալ՝ Մ. Պողոսյան, Քեռի), որը հավաքագրում է կարող մարդկանց և ուղարկում Հայաստանի և ԼԴԻՄ-ի ինքնապաշտպանական շրջաններ: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տրված է Արկադի Դուկասյանի հեռախոսագրույցը ժողպատգամավոր Վաչագան Գրիգորյանի և ԼԴԻՄ մարզործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանի հետ, որոնք ահա արդեն 11-րդ օրն է, ինչ Մոսկվայում շարունակում են քաղաքական հացադուլը. «Մեր ժողովրդին հնարավոր չէ ծնկի բերել: Մենք այդ ժողովրդի մի մասնիկն ենք և կգնանք մինչև վերջ (Վ. Գրիգորյան): «Վետերանների ռեակցիան ինձ հիշեցնում է հանրահայտ երգի տողերը՝ «Իսկ մեզ համար միևնույնն է» (Սեմյոն Բաբայան):

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1990թ. սեպտեմբերի 22-ի պլենումը որոշում է ընդունել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում խորհրդային և կուսակցական մարմինների վերականգնման մասին: Մտածում են՝

Մոսկվան կարծես դիտավորյալ կերպով է մեզ մոտ այս իշխանական մարմինները վերացրել, որպեսզի մեզ շեղի հիմնական խնդրից:

Օրագրիս կցված է «Գրոհ կուսընթացի շենքի վրա» վերտառությամբ հողվածը, որտեղ գրված է. «Սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը Հաղորդ ավանում արտաքուստ անդորր էր, թեև շրջկենտրոնի յուրաքանչյուր հարկի տակ մարդիկ անհանգիստ էին: Գիշերվա ժամը 1-ն անց կեսին կուսընթացի շենքի մուտքի մոտ երևացին չորս հոգի. երկուսը զինվորական համազգեստով, զինված ավտոմատներով, երկուսն էլ քաղաքացիական հագուստով, որոնք շրջկոմի շենքի պահակ երեմ Չալյանից պահանջեցին բացել շենքի դուռը: Պահակը հրաժարվեց ու ցանկացավ հեռախոսով հայտնել շրջմիլիցիային: Այդ ժամանակ չորսից մեկն ուժեղ հարվածով փշրեց սենյակներից մեկի ապակին, խուժեց ներս, կտրեց հեռախոսագիծը, բացեց շենքի դուռը, պահակին, ձեռքերը վեր բարձրացրած, կանգնեցրեց դեմքով դեպի պատը: Շրջմիլիցիայից եկած երկու աշխատողներին՝ Երկի Պողոսյանին և Վլադիկ Սարգսյանին էլ են կարգադրում կանգնել պահակի կողքին: Պարզվում է, որ այդ չորս հոգին Աղբեջանի ՆԳՄ հրահանգով գործող զինված ջոկատներից մեկն են և շրջկոմի շենքը վերցրել են հսկողության տակ: Ինչպես տեսնում ենք, աղբեջանցիները չեն ենթարկվում ո՛չ ԽՍՀՄ ՆԳՄ

և ո՛չ էլ խորհրդային բանակի զինվորական անձնակազմի ղեկավարներին, նրանք բացե- իրաց մարտահրավերի են կոչում:

Այնպես որ, ինչպես ասում են, ոսկորը կուկորդներիս է հասել, և սեպտեմբերի 25-ին՝ երկուշաբթի օրը, կանգ առան բոլոր արդյունաբերական ձեռնարկություններն ու շինհարթակները և պետական հիմնարկները, ոչ մի դպրոցի դուռը չբացվեց, դադարեցվեցին պարապմունքները, կանգ առավ հասարակական տրանսպորտը: Տասնյակ-հազարավոր ստեփանակերտցիներ դուրս եկան փողոց և իրենց քաղաքացիական անհնազանդության կամքը ցուցաբերեցին:

26.09.1990թ.: Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գյուղի վրա հարձակվում են հարևան աղբեջանական Մամիջլու և Բաշ Գյունեփայա գյուղերը միլիցիայի և խորհրդային զինվորների ուղեկցությամբ, իսկ Պոլյանիչկոն և Մութալիբովը շքախմբով այցելում են աղբեջանական գյուղերը և նրանց հրահրում հայերի դեմ: Փաստորեն պատերազմ է, բայց մենք դեռ զսպվածություն ենք ցուցաբերում. մինչև ե՞րբ, չգիտեն:

Մաուեն ՀԱՆԱԶԱՐՅԱՆ Մշակույթի վաստակավոր աշխատող, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, անհապական թոշակառու





ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

... մենք լսել, նույնիսկ տեսել ենք, որ մեծ զորքերն էլ իրենց կապարեկազործված զենքերով խուսափել են պարերազմի դաշտերից, իրենց հարստությունն էլ թողել են թշնամուն: Միմիայն մի ուժ կա, որ չենք լսել, թե հեշտությամբ խորտակված լինի երբեմից, մի ուժ կա, որ փոքրին էլ դարչնում է մեծ, փկարին դարչնում է հզոր և և հաղթություններ է սպասողում ու սխրալի գործեր: Դա ժողովուրդների ոգևորությունն է:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր գոյության եւ անվտանգության թիվ մեկ առաջնահերթությունը սպառազինվելն է: Բայց մենք, ցավոք, այնքան էլ ուշադրություն չենք դարձնում դրան: Խոսում ենք դրա կարեւորության մասին՝ պատասխանատվությունը մեկս մյուսի վրա թողնելով: Գիտենք, որ առանց դրա ի վերջո կործանվելու ենք ազգովի, սակայն նախընտրում ենք միայն սեփական փրկության մասին մտածել: Մնում է այլեւս կասկածել, թե արդյոք մենք ա՞յն ազգն ենք, որ, ինչպես Սեւակն է ասում. «Դարեր շարունակ մեռանք ապրելու համար, բայց ոչ մի վայրկյան չապրեցինք մեռնելու համար»: Եթե այսպես շարունակենք, ուրեմն, այդ խոսքին հակառակ՝ ապրում ենք մեռնելու համար...

Խոսքը ժողովրդագրական աճի մասին է: Մեր աճի ցուցանիշը ցածր է, շատ ցածր՝ ազգովի մեռնելու եւ աստիճանաբար վերանալու մակարակի... Ինչո՞ւ: Ինչ խորին հանգամանք, այստեղ առկա են ոչ թե առարկայական, այլ՝ հնուց ժառանգված հոգեբանական պատճառներ: Շրջանցելով հարցի էական դրոշմապատճառները՝ հենվում ենք պարզունակ եւ խաբկանք պարունակող պատրվակների վրա: Առաջին անհիմաստ պատրվակը, որ շրջանառվում է, տնտեսական անբավարար պայմաններն են: Ոչ ոք չի ճշտել կամ ճշտում դրա նշանոցը: Ամենահամեստ եկամուտների տեր ընտանիքից մինչեւ ամենաբարեկեցիկը նույն պատրվակն են նշում: Սա անհեթեթ պատճառաբանություն է: Ինչո՞ւ...

- Ամենաաղքատ երկրների ժողովրդագրական աճը միշտ ամենաբարձրն է աշխարհում:
- Միեւնույն երկրի աղքատ զանգվածների աճը միշտ գերազանցել է նույն երկրի բարեկեցիկ կամ հարուստ շերտերի աճին:
- Աշխարհի ամենահարուստ երկրները միշտ աչքի են ընկել իրենց նվազագույն աճով կամ նույնիսկ բացասական աճ են գրանցել:

Սրանք անհեթեթի ճշմարտություններ են: Միամտորեն կարծում ենք, թե իբր մուսուլմանները մեզ հայտնի ու անհայտ պատճառներով ավելի արագ են բազմանում, քան քրիստոնյաները: Երեւույթը կա, սակայն պատճառը կրոնական հավատամքի հետ կապ չունի: Մուսուլմանները, վերջին դարերի ընթացքում ենթարկվելով արեւմտյան երկրների հարստահարմանն ու կեղեքմանը, աղքատ են մնացել: Ժողովրդագրական աճի դրական միտումը գալիս է այդտեղից՝ առերեսույթ զուգորդվելով կրոնական գործունի հետ: Այսօր աշխարհի մուսուլմանները արեւմտյան երկրների քրիստոնյաների համեմատ աղքատ են: Արաբական մի քանի նավթարդյունաբերող երկրների շեյխերի առասպելական հարստությունը թյուրիմացության մեջ է զգել շատերին: Այնինչ դրանք բոլորը միասին կազմում են աշխարհի մուսուլմանների 5 տոկոսը միայն՝ չհաշված նրանց երկրների աղքատ զանգվածը: Վերջերս Իրաքի եւ Սիրիայի պատերազմական դրության պատճառով Զորդանանում ապաստան գտած՝ վրանների տակ ապրող շուրջ 250 հազար փախստականների ճամբարում մեկ տարում ավելի շատ երեխա է ծնվել, քան Հայաստանում նույն ժա-

մանակահատվածում:

Ինչի՞ մասին է խոսքը... Մեր հարեւան Իրանն ընդերքով հարուստ երկիր է: Բայց պաշտոնական թվերով երկրի բնակչության ավելի քան 50 տոկոսը ծայրահեղ աղքատ է: Իսլամական հեղափոխությունից առաջ երկրի բնակչությունը շուրջ 35 միլիոն էր: Իրան-Իրաք 8-ամյա պարտադրված պատերազմն ու տնտեսական վայրկյանները երկիրն աղքատացրին: Ազգային արժույթի անկումն աներեւակայելի չափերի հասավ: Պարզ է, որ նման իրավիճակում աշխատավարձով ապրող զանգվածն օր օրի կաղքատանա: Աշխատավարձի աճի տեմպը երբեք չի հասնի զնաճի տեմպին: Մեզից ոմանք, շփվելով մայրաքաղաքում բարեկեցիկ կյանքով ապրող իրանցիների հետ, հաճախ սխալ պատկերացում ունեն այդ երկրի սոցիալական վիճակի մասին: Այդ ամենով հանդերձ, երկրի բնակչությունը 40 տարվա ընթացքում աճել է հասել է 85 միլիոնի: Արդյոք այս փաստերը բավական չե՞ն հանգստացնում համար, որ սակավազավակությունը ոչ թե ուղղակիորեն ֆինանսների հետ է կապված, այլ քողարկված է անհեթեթ պատրվակ է, եւ պատճառն այլ տեղ պիտի փնտրել: Ցավոք, մեզանում կա մի յուրահատուկ հոգեբանական մտավածք, որը գալիս է մեզ մոտ անցյալից, եւ դա վերացնելու համար մենք քիչ ենք աշխատել:

Մենք օտար երկրներում ամենաշատ թափառող ազգն ենք: Համաշխարհային վերջին տնտեսական ճգնաժամի տարիներին, երբ կյանքն ամենուր դժվարացել էր, տարբեր երկրների հասարակ քաղաքացիներ տրամադրում էին եւ միաժամանակ դժվարություններին դիմանալու միջոցներ նախաձեռնում: Միայն Հայաստանի քաղաքացիների գերակշիռ հատվածն էր ելքը տեսնում սեփական երկիրը լքելու եւ օտար ափերում «մարդավայել» ապրելու մեջ: Սա համազգային ցավ է՝ խորնիկ հիվանդություն: Այս հիվանդությամբ տառաջանող ու դրա բուժման մասին չմտածող մարդն ինչպե՞ս կաճի: Այդպիսի ախտի կրողը նման հոգեբանության մեջ չի կարող բազմազավակ ընտանիք կազմել ու հողին կառչած մնալ:

Կա նաեւ մեկ այլ թյուրըմբռնում. երեխաների որակյալ դաստիարակության հարցը: Մեկ զավակ ունեցողների մոտ տգիտության աստիճանի է հասնում երեխային բազմակողմանի եւ որակյալ կրթություն տալու տեսլականը: Սրանք տեղի-անտեղի գումար են ծախսում իրենց երեխային դաշնամուրի, թենիսի, երգի ու պարի տալու, տարբեր ճամբարներ ու հանգստյան գոտիներ ուղարկելու համար: Նրանք գտնում են, որ այդ հմտություններին տիրապետելը երեխային կտա անհրաժեշտ զարգացում: Անպտուղ գիտելիքներով, անհամար խաղալիքներով երեխային ծանրաբեռնելը դարձրել ենք անհիմաստ մրցակցության առարկա: Բայց դրանք ընդամենը կողմնակի զբաղմունքներ են, որոնք չեն կարող որակյալ մարդ ու պիտանի քաղաքացի դաստիարակելու երաշխիք լինել: Շատ հաճախ հենց այդ ընտանիքների միևնուժար երեխաներն են ոչ նախանձելի վիճակում հայտնվում, երբ մուտք են գործում հասարա-

կություն՝ դպրոց, աշխատաբային միջավայր կամ ընտանիք ստեղծելիս: Բանակում, օրինակ, միևնուժար տղաների վարքագիծն ամենեւին տղամարդկային՝ առնական, զգաստ ու ինքնուրույն չէ: Բանակային կյանքում միշտ բարդություններ են առաջանում հենց այդպիսիների մոտ: Իզուր չէ, որ այդ միևնուժարների ծնողներն ամեն միջոցի դիմում են, որ իրենց տղան խույս տա ծառայությունից: Նման բարդություններ են առաջանում նաեւ աղջիկ-միևնուժարների մոտ: Աշխարհը դեկավարող հեղինակությունների շարքերում դժվար թե այդպիսիք հայտնվեն: Ամերիկայի ամենահեղինակավոր նախագահներից Քեմեդին ծնողների 11 զավակներից մեկն էր:

Երեխայի ինքնուրույնությունն ու նախաձեռնողականության ոգին, իրավունքի գիտակցումն ու պաշտպանումը, հանդուրժողականությունը, դժվարություններին դիմանալն ու նյութերին օգնելը, պատասխանատվության զգացումը, պայքարի մեջ հաղթելն ու առաջամարտիկ լինելը որակներ են, որոնք ի հայտ են գալիս հենց բազմազավակ ընտանիքներում մեծացած երեխաների մոտ, որովհետեւ կա անհերքելի փաստ. զարգացումն ու որակը ստացվում են միայն հակադրությամբ: Մարդկային զարգացման էվոլյուցիան առաջ է գնում հակադրությունների հաշվին: Չկա հակադրություն՝ չի՞ լինի զարգացում: Միևնուժար տղան կամ աղջիկն ո՞ւմ հակադրվի. սեռյակի չորս պատերի՞ն, թե՞ խաղալիքների՞ն:

Մեկ կարեւոր դիտարկում եւս: Ինչքան էլ ուշադիր լինենք, որ մեր զավակներն առողջ եւ անվտանգ մեծանան, այդուամենայնիվ, կյանքին սպառնացող վտանգները միշտ առկա են: Դրանց զգալի մասը դուրս է մեր հսկողությունից. վթար, անբուժելի հիվանդություններ եւ այլն: Բազմազավակ ընտանիքներն այդ տեսակետից իրենց ավելի անուր են զգում, երեխաներից մեկնունեկի հավանական կորուստը խորը վիշտ պատճառելով հանդերձ ընտանիքի քայքայման կամ վերացման պատճառ չի դառնում: Ինչպես ասում են, մյուսներով միփաթովելը կա, եւ կյանքը շարունակվելու է: Ողբերգությունն այնտեղ է, երբ ընտանիքի միևնուժարը ողբերգական դիպվածով հեռանում է կյանքից: Արդյունքում քայքայվում է ընտանիքը, եւ հասուն տարիքում հայտնված ծնողների զղջումը, թե ինչու ժամանակին շատ զավակներ չեն ունեցել, անօգուտ է:

Անհետաձգելի գերագույն նպատակ պետք է դառնա մեր երկրի ժողովրդագրական աճի տեմպի հարցը: Այստեղ հսկայական անելիք ունեն բոլորը՝ պետական այրերից մինչեւ հոգեբաններ ու հոգեւորականներ: Սա այն սպառազինությունն է, որին հակադրվել չեն կարող մեր հարեւաններն ու հեռու-մոտիկ թշնամիները: Այս սպառազինությամբ կապահովենք մեր երկրի հզորությունը, անվտանգությունը, տնտեսական զարգացումը, ապագայի նկատմամբ հույսն ու երջանիկ ապրելու տեսլականը:

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ  
aravot.am

ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒՏԵՑ ԳՆԱԸ ԴԵՏԵ Է ՀԱՄԱՐՎԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄ

«Մեկ բայրաքթարի ստեղծման վրա իրենք ծախսել են 270 մլն դոլար: Դա մեր 15 տարվա գիտության ֆինանսավորումն է. Հայաստանում գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի 0,2 %-ը: Ֆիզիկայի ֆակուլտետ գնալը պետք է համարվի հայրենասիրության բարձրագույն դրսևորում, դա պետք է քարոզվի բոլոր մակարդակներով: Հիմա իրենք առավելություն ունեն օղում, տարիներ հետո այն կլինի գետնի վրա, ցամաքում: Ռոբոտներ են լինելու, ոգնիներ, որոնք կարող են մտնել ու պայթեցնել մեր բլիմդաժները: Այնհայտ է, որ մենք թակակոխել ենք տեխնոլոգիական պատերազմի դարաշրջան: Այդ տեխնոլոգիական մոդեռնիզացիան մեր ազգի մոտ դոկտրինային պետք է լինի վերից վար»: այս մասին «Ժամանակ»-ի հետ զրույցում ասաց ֆիզիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Իշխանյանը: Նա ասաց, որ մի քանի պարզ ցուցանիշներ պետք է հաշվի առնել նախքան գիտության զարգացման մասին խոսելը: «Գոյություն ունի պարզ ցուցանիշ՝ ՀՆԱ-ի մասհամուն: Այդ մասհամունը Թուրքիայում կազմում է ՀՆԱ-ի 2 %-ը, Իսրայելում գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի 4 %-ը, Հայաստանում՝ 0,2: Հայաստանը զբաղեցնում է վերջին տեղերից մեկը: Քանի դեռ չկա արմատական փոփոխություն այս առումով, խոսել որևէ բանից անհիմաստ է», - մտահոգություն հայտնեց պրոֆեսոր Արթուր Իշխանյանը: Նրա խոսքով՝ կամ մենք կգիտակցենք գիտության կարևորությունն ու գիտության վերաբերյալ կունենանք տարրական պատկերացում, կամ՝ դատապարտված ենք լինելու: ՀՆԱ-ից 0,2 % հատկացում անելով խոսել որևէ բանի մասին՝ անհիմաստ է: Սովետական Միության ժամանակ մենք ունեինք 32 հազար գիտական, այսօր ունենք ընդամենը 3000, որի կեսը՝ հասարակագետները», - նշեց նա, ապա նաև խոսեց գիտականների միջին տարիքի մասին, որը, ըստ կարգի, պետք է լինի մինչև 45 տարեկանը, այնինչ Հայաստանում նրանց միջին տարիքը 70 է:

ՎԵՐ ԿԱՑ, ԲԱԼԵՆ,

Վեր կաց, բալեն, օրոցքիդ տակ հողն է այրվում,  
Վեր կաց, բալեն, թեկուզ փոքր ես,  
պիտի զարթնես,  
Վեր կաց, փոքրիկ, կռվի ճամփին կմեծանաս,  
քո պապերի մի բուռ հողին տեր կդառնաս:

Վեր կաց, բալեն, մեր անցյալի ճամփան էլ տես,  
Վեր կաց, բալեն, հողդ ահա կանչում է քեզ,  
Վեր կաց, բալեն, հերոսներիդ սխրանքը տես,  
Արիացիր առյուծասիրտ պապերիդ պես:

Վեր կաց, բալեն, քնից

զարթնիր,  
Վեր կաց, բալեն, շուտ մեծացիր,  
Հերոսներդ նենգ թշնամու ահն են դարձել,  
Հայկի երկրում հաղթանակի ճամփան կերտել:

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ  
ԼՂՀ վաստակավոր ռաուցիչ  
10 հոկտեմբեր, 2020  
Գ. Սզնեք

ՈՒՋՄԱՍՈՒՋԱԿԱՆ

ՎԻՆՉՅՈՒՆ ԲՈՒՆԳ ՖՈՒԻ ՆՈՐԱԲԱՑ ՄԱՐԶԱԴԱՎԵՐՔԻՆ՝ ՈՐՊԵՆ ԱՊԱՍՏԱՐԱՆ

Վինչյուն և թայջի մարտարվեստները սիրված են Արցախում: Վերջին շրջանում դրանք զարգացնում ու մասսայականացնում են նոր փուլ էին անցել: Այս գործընթացում մեծ դեր ունի չի-նական մարտարվեստում շուրջ երկու տասնամյակ կոփվող, ճանաչված մարզիչ Սայաթ Բաղդասարյանը, որն իր մարզչական գործունեության ընթացքում՝ սկսած 2003թ.-ից մարզել է շուրջ 1200-1500 մարզիկ և տվել բազմաթիվ 33 չեմպիոններ, միջազգային չեմպիոններ, Եվրոպայի 2 չեմպիոն, ինչպես նաև Եվրոպայի մրցանակակիրներ, 1 աշխարհի փոխչեմպիոն և 5 անգամ պարզատրվել է հանրապետության նախագահի կողմից:



Սայաթ Բաղդասարյանը 2017թ. մարտին պաշտոնապես հիմնադրեց Արցախի 3անրապետության վինչյունի և թայջիի ֆեդերացիան ու իր շուրջը համախմբելով մարզիկների՝ սկսած 5 տարեկանից և համախոհների տարբեր ոլորտներից, սկսեց կյանքի կոչել ժամանակահատված ծրագրեր և նպատակներ: Իրականացնում ճանապարհին հանդիպած խոչընդոտ էր մարզադահլիճի բացակայությունը, որի համար անձնական միջոցներով ձեռք բերեց տարածք: Ակադեմիկոս, բարերար Գրիգորի Գաբրիելյանցի անվան «Ապագա սերունդների հիմնադրամ»-ի հովանավորությամբ տարածքը վերանորոգվեց և ժամանակակից մարզադահլիճի տեսք ստացավ:

Վիելու համար, որոնք մեր հայրենիքի ապագա պաշտպաններն են: Ֆեդերացիայի մարզիկները վինչյունի ցուցադրական ելույթ էին կազմակերպել ի պատիվ պարոն Գաբրիելյանցի և հանդիսականների:

Սեպտեմբերին Ստեփանակերտում կայացել էր Թումանյան փողոցում գտնվող վինչյուն քունգֆուի մարզադահլիճի պաշտոնական բացումը, որը շնորհավորելու էին եկել նաև համարապետության նախագահը, ԱԳ ՌԵՍԶ նախարարը, ոլորտի այլ ներկայացուցիչներ: Կարմիր ժապավենը կտրեցին Գրիգորի Գաբրիելյանցն ու Սայաթ Բաղդասարյանը: Հարմարավետ և

բոնոնց մեդալակիր, ինչպես նաև 2018թ. ՀՀ քիկբոքսի առաջնության բրոնզե մեդալակիր, Հայկ Գասպարյան՝ 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2017թ. Վինչյունի Եվրոպայի 2-րդ առաջնության արծաթե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում արծաթե մեդալակիր, Սայաթ Բաղդասարյան՝ 2017թ.

դահլիճի գործունեությանը: Նոր վերանորոգված մարզադահլիճը պատերազմի առաջին իսկ օրից տրամադրվեց բնակչությանը՝ ապաստանելու: Ֆեդերացիայի նախագահի խոսքով՝ պատերազմի օրերին մարզադահլիճում ապաստան են գտել շուրջ 30-40 բնակիչներ: Մարզումները, բնականաբար, դադարեցվել էին: Բայց, հուրախություն մարզիկների և պարապել ցանկացողների, Սայաթ Բաղդասարյանը հայտնեց, որ ֆեդերացիան շուտով վերսկսում է գործունեությունը, մարզումները կշարունակվեն բնականոն հունով: Մարզադահլիճն աստիճանաբար կհամարվի ժամանակակից մարզագույքով և համապատասխան մարզասարքերով՝ պատշաճ մարզումներ պահովելով մարզիկների համար:

Սայաթ Բաղդասարյանի մարզչական թևի տակ կոփվում է տարբեր տարիքի 30 մարզիկ: Վերջին տարիներին նրա սաները մասնակցել են առաջնությունների երկրից դուրս և վերադարձել հաղթանակով ու մրցանակային տեղերով: Արթուր Հովակիմյան՝ 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում բրոնզե մեդալակիր, 2017թ. Վինչյունի Եվրոպայի 2-րդ առաջնության արծաթե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի մեծամարտային ձևում արծաթե մեդալակիր, Սայաթ Բաղդասարյան՝ 2017թ.

Վինչյունի Եվրոպայի 2-րդ առաջնության թաուլու վարժախմբակիր բրոնզե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության վինչյուն ոճի արծաթե մեդալակիր, 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության թայջի ոճի արծաթե մեդալակիր, Արա Պուլուզյան՝ 2019թ. Ուշուի Եվրասիայի 1-ին առաջնության թայջի ոճում արծաթե մեդալակիր:

Սայաթ Բաղդասարյանը ներկայացրեց առաջիկա ծրագրերը. «Նշեն, որ ներկայում ֆեդերացիայում մարզվում է 30 մարզիկ, բայց այսուհետ հնարավոր կլինի այդ թիվը քառասպատկել: Այսինքն, այս դահլիճում հնարավորություն ունեն պարապելու շուրջ 120 մարզիկներ տարբեր խմբերում, ընդ որում՝ ոչ միայն վինչյուն, այլև թայջիի առողջարար գիմնաստիկա եւ առանձին խմբում առողջարար մարմնամարզություն: Դա նշանակում է, որ կունենանք ոչ միայն կոփված մարզիկներ, այլև կնպաստենք առողջ պրեկալեկերային հետևող բնակչության պատշաճ մարզումներին: Սերտ համագործակցում ենք ՀՀ վինչյուն քունգֆուի ֆեդերացիայի հետ, որտեղ անցնում ենք վերապատրաստում, ինչպես նաև հնարավորություն ունենք նրանց միջոցով ստանալ միջազգային կարգի որակավորում: Նաև համագործակցում ենք ՀՀ ավանդական ուշուի ֆեդերացիայի հետ, որի շրջանակում մասնակցում ենք ու մասնակցելու ենք Եվրոպայի, աշխարհի եւ միջազգային առաջնություններին»:

Հայտնի է, որ մարզումները բարենպաստ են ազդում մարդկանց բարոյաև հոգեբանական վիճակը բարելավելուն, իսկ հետպատերազմյան ծանր շրջանը հաղթահարելու համար դա ուղղակի անհրաժեշտ է: Ֆեդերացիայի կազմը պատրաստ է նպաստել մարզիկների և բոլոր դիմորդների պատշաճ մարզումներին ու աջակցել: Թող մարտերն ընթացան միայն ռիսկոս և հարմարավետ մարզադահլիճներում:

ՄՊՈՐՏ, ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔ. ԿԱՊՈՂ ՕՂԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՀԱՐՋՈՒՄ



Արցախում քիչ չեն այն աղջիկները, որոնք նվիրված են մոտենում թե՛ սպորտին, թե՛ ռազմական գործին՝ այդպիսով ցույց տալով հայրենասիրություն եւ բարձրակարգ պատասխանատվություն: Այդպիսի անձնավորություն է մարզական էջի հերթական հյուր Եվա ՂԱԶԱՐՅԱՆԸ, որը սիրով հարցազրույց տվեց «Լուսարար»-ին:

Ծնվել է 1999թ. նոյեմբերի 9-ին Գորիսում: Մինչև 6-րդ դասարանը սովորել է Երեւանում: Արձատներով կապված լինելով Արցախին՝ տեղափոխվել է ուսումը շարունակել է նախ 10-րդ, ապա՝ 11-րդ ավագ դպրոցում: Մասնկուց սիրել է սպորտը եւ ռազմական գործի հետ կապված զբաղմունքները: Բազմիցս մասնակցել է ռազմամարզական մրցույթների եւ հաղթել, «Արծվիկ» ռազմամարզական մրցույթի հաղթող է: Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի առաջին աղջիկ շրջանավարտն է: Ընդունվել է Երեւանի ավիացիոն

ակադեմիան, բայց առողջական խնդիրների պատճառով չի շարունակել: Սովորում է «Մետրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության բաժնում: 2013-ից ԼՂՀ հանրային ֆեդերացիայի մարզիկ է: Պարապլում է մարզիչ Վարդգես Մխիթարյանի մոտ: Մասնակցել է հանրային բազմաթիվ մրցույթների: Ճանաչվել է լավագույն խաղացող, գծային խաղացող, գրանցվել ՀՀ հանրային աղջիկների հավաքականում, մասնակցել Վրաստանում ընթացած հանրային ընկերական խաղերի, այժմ վետերան է:

- Եվա, ինչի՞ սկսվեց հանրային հանդես 2եր սերը:

- Միշտ սիրել եմ սպորտը: Մասնկուց նախընտրում էի ակտիվ սպորտով զբաղվել: Ինձ գրավում էին կոշտ մարզածեները: Պեռես չգիտեի հանրային մասին, երբ ընկերուհին հաճախում էր պարապմունքների: Առաջարկեց, որ ես էլ զբաղվեմ: Գնացի ու տեսա, որ իմ նախընտրած մարզածեներից է հանրային կոշտ ու պատասխանատվություն պահանջող: Սպորտը, ինչպես որ ես, նրբություն չի սիրում: Այդպես սիրեցի ու սկսեցի զբաղվել: Ունեցա մեծ հաջողություններ:

- Ինչպե՞ս է ստացվում, որ արտաքինից այդքան նուրբ ու կանացի աղջիկը սիրում է կոշտություն, նախընտրում է կոպիտ մարզածեներ:

- Կողքին շատ են խոսում իմ նրբության մասին, բայց դա միայն արտաքինից է այդպես երեւում, բնավորությամբ ես ավելի շատ կոպիտ եմ եւ կարող եմ դա օգտագործել սպորտում: Հանդերձը աղջիկներին չի պարտադրում ինձ պես լինել: Թիմում բոլորս էլ տարբեր բնավորություններ ունենք: Բայց ունենք ընդհան-

րություն, որը սպորտում կարելի է պետք է լինել զգաստ, պատասխանատու, հայրենասեր: Երբեք չեն մտածել թողնել սպորտը, ավելին, լինելով վետերան, նախապատրաստվում եմ մասնակցել կանանց առաջնության, բայց ժամկետը դեռեւս հայտնի չէ:

- Ձիմվորական կյանքը սիրելը, հավանաբար, Ձեր բնավորության տրամաբանական շարունակությունն է:

- Բնավորության եւ գեների: Ինձ հոգեհարազատ է ռազմական կյանքը, քանի որ պապս, հայրս եւ քեռիս այդ գործով են զբաղվել ու կիսվել ինձ հետ: Միշտ ցանկացել եմ նրանց գործը շարունակել: Խոսքը ոչ թե համազգեստ հագնելը սիրելու մասին է, ինչպես որ պատկերացնում են շատ աղջիկներ, այլ լուրջ պատրաստակամության ու նվիրումի: Ինչքան ավելի մոտիկից ես ծանոթանում ռազմական գործին, զինվորական կյանքին, այնքան ավելի շատ ես գիտակցում դրա լրջությունն ու կարեւորությունը: Իմ հայրենասեր լինելն ուզում էի դրսևորել այդ կերպ:

- Ինչպե՞ս վերաբերվեցին ընտանիքի անդամները Ձեր նախընտրած ճանապարհին:

- Մայրս ինձ հասկանում էր եւ համաձայն էր, բայց հայրս սկզբնական շրջանում դեմ էր: Ընդունված է մտածել, թե ռազմական համակարգում աղջիկներին լուրջ չեն վերաբերվում, բայց դա կարծրատիպ է, որը պետք է փոխել: Ես որոշեցի կրթություն ստանալ այդ գծով՝ չնայած ամեն ինչին, հայրս էլ սկսեց աստիճանաբար համակերպվել: Ավիացիոն ակադեմիայում սովորելիս առողջական խնդիր ունեցա: Սովորելուց բացի մասնակցում էի բոլոր մրցումներին ու միջոցառումներին: Չէի հասցնում հետեւել ծիշտ սննդակարգիս եւ չափից ավելի նիհարել էի: Ծնողներս ինձ հանեցին ակադեմիայից: Ես հոգեբանորեն դժվարությամբ համակերպվեցի այն բանի հետ, որ պետք է թողնեմ սիրած մասնագիտությունս ստանալս, բայց եւ ինձ տրամադրեցի, որ հայրենասիրությունը միայն դրանով չէ: Սովորում եմ կովկասագիտություն, որը նույնպես հայրենասիրության վառ արտահայտում է: Միաժամանակ աշխատում եմ «Միտք» հասարակական կազմակերպությունում որպես կամավոր, որի նպատակը հայրենամետ է՝ վերականգնել ազգային արժեքները: Սպորտը, մասնագիտությունս, աշխատանքս կապող օղակ են հայրենիքիս ծառայելու հարցում, ինչին միշտ ձգտել եմ:

- Ձեր կարծիքով, զինվորական շարքերն աղջիկներով համարելու անհրաժեշտություն կա՞ Արցախում:

- Ձիմվորական շարքերը գուցե եւ ոչ, բայց բանակում աղջիկներն ու կանայք կարող են իրենց գիտելիքներով օգտակար լինել եւ անհրաժեշտ են: Եթե խոսենք սահման պահելու մասին, ապա տղամարդիկ դա ավելի լավ են անում, իսկ հատուկ պատրաստված աղջիկները կարող են ավելի լավ դիպուկահար լինել, օրինակ, եւ կատարել հանձնարարություններ: Ապացուցված է, որ, կապված շնչառության հետ, աղջիկներն ու կանայք ավելի լավ կարող են կրակել ու տիրապետել այդ գործին, ուրեմն՝ պետք է դա օգտագործել: Բժշկական օգնությամբ, համակարգչային գործով նույնպես առավելություններ կան թույլ սեռի մոտ, ինչը՝ դա չօգտագործել բանակում: Կան կանայք, որոնք հակառակորդի հանդեպ վրեժխնդրությամբ են լեցուն եւ այդ հողի վրա կարող են սխրանքներ կատարել: Իսկ ընդ-

հանրապես կին զինվորականը կամ հատուկ ջոկատայինը, իմ կարծիքով, մարմնավորում է հայրենասիրության գագաթնակետը:

- Լինելով միակ աղջիկը խմբում՝ ուսանողական տարիներին ի՞նչ դժվարությունների եք հանդիպել:

- Առաջին տարին էր, որ աղջիկներին թույլատրեցին ռազմամարզական վարժարանում սովորել: Ես ընդունվեցի միանգամից երկրորդ կուրս, որտեղ սովորում էին միայն տղաներ: Անսովոր էր նրանց համար: Բնական է, որ ձգտում էին, այսպես ասած, իրենց ցույց տալ: Բայց դա միայն սկզբնական շրջանում էր: Աստիճանաբար զգաստացան, սկսեցին բառապաշարին հետեւել: Ես խստությամբ էի վերաբերվում նրանց ամեն մի քայլին. իմ գեներից ինձ փոխանցվել է այդ հատկությունը: Սկզբում դժվար էր: Ժպտալ անգամ չէի փորձում, որովհետեւ կարող էին սխալ ընդունել: Ես գիտեի, որ հեշտ էլ լինելու ընդհանրած ճանապարհ, պատրաստ էի ամեն ինչիս: Մի կողմ էի դրել շպարը, ընկերուհիներիս հետ շփումը, միայն այդպես հաջողվեց անցնել այդ ստուգատեսը եւ իսկական կարգի կերպար ունենալ:

- Անձնական կյանքին ինչպե՞ս է ազդում Ձեր հավակնությունը:

- Միանգամայն դրական: Ես որեւէ խոչընդոտի չեմ հանդիպել այդ հարցում: Բարեբախտաբար հանդիպել եմ տղայի հենց այդ համակարգից, որը կիրթ ու հասկացող լինելով՝ միայն դրական վերաբերմունք է ցուցաբերել հավակնություններիս հանդեպ:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք այն աղջիկներին, ովքեր նախընտրում են ռազմական գործով զբաղվել ու ընտրում են այդ մասնագիտությունը:

- Պետք է գիտակցել, որ առաջին հայացքից դատելով՝ չպետք է ոչինչ անել: Պետք է հաշվի առնել, որ կարող է ամենադժվար իրավիճակը պատահել, պետք է պատրաստ լինել ամեն ինչի: Եթե կասկած ու անվստահություն կա սեփական ուժերի նկատմամբ, ավելի լավ է ուրիշ մասնագիտություն ընտրել, որն ավելի հոգեհարազատ է: Բայց նաև հաշվի առնել այն, որ ամեն ինչ կախված է անձից, եւ շատ ցանկանալու դեպքում ոչինչ անհնար չէ:

